ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե՝ ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Կապան, Շահումյան 20/32, 3301:
Հեռ.՝ (+374 285)5 25 63
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 3 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720: **Գինը՝ 100 դրամ**

ISSN 1829-3468

Աշխարհին խաղաղ օրեր,
Լույսերին՝ կրկնություն մաղթեմ,
Շռայլ ձեռք մաղթեմ հոգուն,
Իսկ մարմնին ճգնություն մաղթեմ:
Ամենքին, ամեն մարդու
Երդաշեն տխնություն մաղթեմ...

ՀԱՍՊ ՍԱՀՅԱՆ

ՇԱԲԱԹ, 10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2016Թ.
№ 29 (405)

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Միասին՝ հանուն Քաջարանի

Հարցազրույց Քաջարան քաղաքային համայնքի ղեկավարի թեկնածու Մանվել Փարամազյանի հետ

Սեպտեմբերի 18-ին տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ կանցկացվեն նաեւ Քաջարան քաղաքային համայնքում:

Քաջարանը ոչ սովորական համայնք է. այնտեղ է գտնվում Հայաստանի Հանրապետության ամենախոշոր ձեռնարկություններից մեկը՝ լեռնահանքային արդյունաբերության հայաստանյան հսկան՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը, որտեղ աշխատում է համայնքի ընտրողների մեծ մասը: «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությունը կողմնակից է բացառապես գործող օրենսդրությանը համահունչ գործելակերպին, թեկնածուների միջեւ՝ հավասար պայմաններով ընտրապայքարին, ազատ եւ արդար ընտրություններին:

> *«ԶՊՄԿ» ՓԲ ընկերությունը, որպես մարզի խոշորագույն տնտեսվարող, շահագրգռված է մարզի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում՝ համարելով դա իր գլխավոր առաքելություններից մեկը: Այդ իրողությունը ենթադրում է համայնքային իշխանության եւ ՓԲ ընկերության ղեկավարության սերտ համագործակցություն: Դա է պահանջում համայնքի բնակչության շահը:*

Եվ այսպես՝ Քաջարան քաղաքը պատրաստվում է ընտրելու իր հերթական, ավելի ստույգ՝ 8-րդ քաղաքապետին: 58-ամյա Քաջարանի քաղխորհրդի գործկոմի նախագահներ ու քաղաքապետներ են եղել Վոլոդյա Ալեքսանյանը (1960-65թթ.), Գառնիկ Հովհաննիսյանը (1965-71թթ.), Արտաշես Պետրոսյանը (1971-84թթ.), Ալյոշա Ավանեսյանը (1985-86թթ.), Սամվել Խաչատրյանը (1986-96թթ.), Ժորա Հովսեփյանը (1996-2002թթ.) եւ Վարդան Գեւորգյանը (2002-2016թթ.):
2002 թվականից (14 տարի) համայնքը գլխավորած Վարդան Գեւորգյանը չի առաջադրել իր թեկնածությունը:
Ինքնառաջադրվել ու որպես համայնքի ղեկավարի թեկնածու են գրանցվել Մանվել Վրեժիկի Փարամազյանը եւ Սպարտակ Սամվելի Սողոմոնյանը, երկուսն էլ՝ անկուսակցական:
Մանվել Փարամազյանը Քաջարանի քաղաքապետարանի իրավաբանն է, Սպարտակ Սողոմոնյանն էլ աշխատում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունում՝ մեխանիկ:
Քաղաքում տիրող նախընտրական տրամադրությունների ուսումնասիրումը ցույց է տալիս, որ քաջարանյան ընտրությունների առաջատարը Մանվել Փարամազյանն է, որի հետ եւ անցկացրել ենք մեր զրույցը:

– Պարո՛ն Փարամազյան, Դուք Սյունիքի հասարակական-քաղաքական կյանքում նոր դեմք եք, շատերին՝ անծանոթ, ուստի եւ փորձեք համառոտ կենսագրությամբ ներկայանալ ընթերցողին:

– Ծնվել եմ Քաջարան քաղաքում, որտեղ եւ ստացել եմ նախնական կրթություն, 1995-2000թթ. սովորել եւ ավարտել եմ Գորիսի «Սյունիք» ինստիտուտի իրավաբանական ֆակուլտետը, իսկ 2007-2012թթ.՝ ՌԴ Օմսկի Ֆ.Մ.Դոստոեւսկու անվան պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հեռակա ուսուցման բաժինը՝ ստանալով իրավաբան-իրավագետի որակավորում: Ծառայել եմ ՀՀ զինված ուժերում: 1994-1995թթ. «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ հանքաքարի ջարդման եւ տեղափոխման արտադրամասում աշխատել եմ փոխարկիչի մեքենավար: 2002-2003թթ. եղել եմ Քաջարան համայնքի ավագանու անդամ: 2003 թվականից առ այսօր աշխատում եմ Քաջարանի քաղաքապետարանում՝ գլխավոր իրավաբան:

– 58-ամյա քաղաք՝ ավանդույթներով հարուստ, մտավորական խավի տեսանելի ներկայությամբ, հանքարդյունաբերական հսկա կոմբինատի ներկայություն, մոտ 8 հազար բնակչությամբ համայնք, ե՛ւ մարզում, ե՛ւ հանրապետությունում քաղաքն ըստ պատշաճի ներկայացնելու անհրաժեշտություն... Արդյո՞ք այդ ամենը ռիսկ, համարձակություն չի պահանջում եւ Ձեզ չի վախեցնում, թե՞ անհրաժեշտ ներուժ տեսնում եք Ձեր մեջ:

– Իրավացի եք, Քաջարանն իր պատմությամբ, կենսագրությամբ, տնտեսական ու մարդկային ռեսուրսների հզորությամբ իսկապես ներկայանալի քաղաք է մարզում եւ ողջ հանրապետությունում: Վստահ եմ, որ իմ ներուժն ու հնարավորությունները կներեն այդպիսի քաղաքի ներկայանալի քաղաքապետը լինելու եւ քաղաքը հավուր պատշաճի ներկայացնելու համար: Իսկ ավելի պարզ՝ ես գործի մարդ եմ եւ տրամադրված եմ գործնականորեն:

– Փաստորեն Դուք կփոխարինեք Վարդան Գեւորգյանին, ում հետ, ի դեպ, 13 տարի աշխատել եք: Ընդունված կարգ է այսպիսի մի հարցի արծարծումը. ինչպե՞ս եք գնահատում նրա՝ մոտ 14 տարվա գործունեությունը քաղաքապետի պաշտոնում:

– Վարդան Գեւորգյանն իսկապես երկար է պաշտոնավարել, աշխատել է իր կարողությունների չափով, քաջարանցիները տեսնում ու գնահատում են արվածն ու չարվածը, սակայն դեռեւս բազում չլուծված խնդիրներ կան:

– Քիչ առաջ հիշատակեցինք Քաջարան քաղաքի առանձնահատկություններից մեկը. քաղաքում է տեղակայված «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությունը: Նորություն ասած չենք լինի, եթե վերհիշենք, որ 2014թ.-ից փաստորեն նոր ժամանակներ են սկսել այդ ընկերությունում: Նոր ղեկավարության, նոր աշխատաոճի մասին հանրային կարծիքը, խոստովանենք, ոչ միանշանակ է: Կուզենայինք Ձեր կարծիքն իմանալ:

– Իմ կարծիքով նոր ղեկավարության աշխատաոճում միահյուսված են ժամանակակից եւ ավանդական հարաբերությունների, մոտեցումների լավագույն դրսեւորումները, իրենց գործում արհեստավարժ մասնագետներ են, կարճ ժամանակահատվածում նվաճել են քաղաքի բնակչության, կոմբինատի աշխատավորության համակրանքը, տրամադիր են աջակցելու, նպաստելու քաղաքի զարգացմանն ու բարգավաճմանը, պարզապես քաղաքապետը պետք է կարողանա ստեղծել առողջ համագործակցություն՝ ի բարօրություն Քաջարանի ու քաջարանցիների:

– Ձեր պատասխանից կարո՞ղ ենք ենթադրել, որ համայնքապետարան-կոմբինատ սերտ համագործակցության համար բոլոր հիմքերը կան եւ Դուք, ընտրվելու դեպքում,

էջ 11

ԿՈՄԵՏՈՒՆԻՆԵՐԻ Դ. ՆԱՐԻՈՒՄԻՆ

ՍԱՆՎԵԼ ՓԱՐԱՄԱԶՅԱՆ. ծնվել է 1977թ. մարտի 31-ին Քաջարան քաղաքում:
Միջնակարգ կրթությունը ստացել է Քաջարանի թիվ 2 միջնակարգ դպրոցում: 1995-2000թթ. սովորել եւ ավարտել է Գորիսի «Սյունիք» ինստիտուտի իրավաբանական ֆակուլտետը, իսկ 2007-2015թթ.՝ ՌԴ Օմսկի Ֆ.Դոստոեւսկու անվան պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հեռակա ուսուցման բաժինը: Ունի իրավաբան-իրավագետի որակավորում:
Ծառայել է ՀՀ զինված ուժերում, զորացրվել ՀՀ ՁՈՒ ավագի կոչումով: Զինվորական ծառայության ընթացքում արժանացել է շնորհակալագրերի, խրախուսական պատվոգրերի:
1994-95թթ. «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ հանքաքարի ջարդման եւ տեղափոխման արտադրամասում աշխատել է փոխարկիչի մեքենավար:
2002-2003թթ. եղել է Քաջարան համայնքի ավագանու անդամ: 2003 թվականից առ այսօր աշխատում է Քաջարանի քաղաքապետարանում՝ գլխավոր իրավաբան:
Մասնակցել է բազմաթիվ բարեգործական ծրագրերի իրականացմանը ՀՀ տարբեր մարզերում, ԼՂՀ հանրային կյանքի տարբեր ոլորտներում:
Պարգեւատրվել է ՀՀ ՊՆ «Վազգեն Սարգսյան», Արցախի Մայրության կոմիտեի «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» հուշամեդալներով:
Անկուսակցական է: Ամուսնացած է, ունի երկու դուստր եւ մեկ որդի:

Մեր վստահության քվեն՝ Մանվել Փարամազյանին

ՆԱՐԻՆԵ ՄԻՐԶՈՅԱՆ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ աշխատակից

Սեպտեմբերի 18-ին Քաջարանում կայանալիք ՏԻՄ ընտրություններում համայնքի ղեկավարի իմ թեկնածուն Մանվել Փարամազյանն է, ում ճանաչում եմ դեռեւս դպրոցական տարիներից: Բայց նախեւառաջ երախտագիտությունս եմ հայտնում Քաջարանի գործող քաղաքապետ Վարդան Գեւորգյանին՝ մեր քաղաքի զարգացման գործում ներդրած ավանդի համար: Համոզված եմ՝ նա արժանապատվորեն կհանձնի էստաֆետը համայնքի հաջորդ ղեկավարին եւ կողմնակից կլինի փոփոխությունների:
Մանվել Փարամազյանի պատասխանատվությունը եւ նպատակասլացությունը, մարդկանց սոցիալական խմբերի միջեւ տարբերություն չդնելը, մշտապես աջակցելու պատրաստակամությունը կնպաստեն քաղաքի բարգավաճմանը եւ մի շարք ծրագրերի իրականացմանը: Նշեմ նաեւ, որ ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ նա բավականին աջակցություն ցուցաբերեց բանակին, եղավ առաջնագծում, ինչի մասին համեստաբար լռում է:
Համոզված եմ՝ բոլոր քաջարանցիներիս երազանքն է, որ կառուցապատման եւ բարեկարգման աշխատանքներն ավելի ակտիվանան, կազմակերպվեն մշակութային բազմաբնույթ միջոցառումներ, որոնք աշխուժություն եւ թեթեւություն կպարգեւեն մեր հոգսաշատ կյանքին: Քաղաքի հատկապես երիտասարդ ընտանիքներն ունեն բնակարանի խնդիր, որին, կարծում եմ, կարելի է մասնակի լուծում տալ քաղաքում առկա չօգտագործվող տարբեր շինությունների հաշվին:
Վստահ եմ՝ «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերության հետ համայնքապետարանի առավել սերտ համագործակցության շնորհիվ կյանքի կկոչվեն բազում ծրագրեր, համայնքապետը կպաշտպանի աշխատավորների շահերը, իսկ քաղաքի բնակիչների խնդիրներին կտրվեն հնարավոր լուծումներ:
Ժամանակն է՝ քաղաքում նորամուծություն մտցնել, եւ Մ.Փարամազյանի մուտքը քաղաքական դաշտ կստեղծի նոր մթնոլորտ, ինչին մարդիկ անհամբերությամբ սպասում են:

ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ
«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ ներքին ավտոհավաքակայանի պետի տեղակալ

Մանվել Փարամազյանը կառավարման ձիրք, մեծ ներուժ ունեցող, երիտասարդական ավյունով լի անձնավորություն է, ում ճանաչում եմ երկար տարիներ: Նրա քաղաքական ասպարեզ մտնելը ողջունում եմ եւ ճիշտ որոշում համարում, քանզի լավ կազմակերպիչ է, ունի ցանկացած իրավիճակում արագ կողմնորոշվելու հատկություն եւ լավ հոտառություն: Վերջին տարիների գործունեությամբ իմ նախընտրած թեկնածուն մշտապես ապացուցել է, որ իր խոսքը գործ է:
Համայնքի առջեւ ծառացած խնդիրները բազմաթիվ ու բազմաբնույթ են, բայց առավել լուրջ խնդիրներից է քաղաքի բնապահպանական վիճակը: Կարելի է իրականացնել որոշակի միջոցառումներ՝ վիճակը բարելավելու համար, ինչը մեր թեկնածուի ծրագրի առաջնային հիմնադրույթներից է: Ներհամայնքային ճանապարհների վերանորոգման խնդիր կա հանրապետության ողջ տարածքում, որը պայմանավորված է նախեւառաջ ջրահեռացման նորմալ համակարգ չունենալով. չէ՞ որ ջուրն ասֆալտի թշնամին է: Ուստի ճանապարհների նորոգման համար ներդրած մեծ գումարները չեն արդարացնի, քանի դեռ բնակավայրերի ջրահեռացման հարցը լուծված չէ. Քաջարան քաղաքի պարագայում եւս այդպես է:
Քաջարանը երեւի թե հանրապետության միակ քաղաքն է, որին չի սպառնում արտագաղթի վտանգը, բայց եւ հատկապես երիտասարդներին հայրենի քաղաքում պահելու համար պետք է լուրջ քաղաքականություն վարել, ինչը, վստահ եմ, Մանվել Փարամազյանը կարող է անել:
Իսկ համայնքապետարան-բնակիչ հարաբերություններն առավել թափանցիկ դարձնելու դեպքում մարդիկ վստահություն ձեռք կբերեն թե՛ համայնքապետի, թե՛ համակարգի հանդեպ:
Մեր թեկնածուին մաղթում եմ նախեւառաջ հաղթանակ եւ հաստատակամություն՝ հետագա մարտահրավերներին դիմակայելու եւ քաղաքի հիմնախնդիրները լուծելու համար:

ԼԵՌՆԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
ԵԿՄ Քաջարանի տարածքային բաժանմունքի նախագահի պաշտոնակատար

Վաղուց եմ ճանաչում Մանվել Փարամազյանին, բայց առավել մտերիմ հարաբերություններ սկսվեցին ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին, ինչի ժամանակ նա առանձնացավ իր հայրենասիրությամբ ու անմնացորդ նվիրվածությամբ:
Քաղաքապետարան-ԵԿՄ սերտ համագործակցության կարիքը վաղուց է զգացվում, եւ կան հարցեր, որոնք անմիջապես առնչվում են համայնքապետարանին: Իմ նախընտրած թեկնածու Մանվել Փարամազյանի հետ արդեն որոշ աշխատանքների իրականացման համար ծրագրեր են մշակվել, այն է՝ Եղբայրական գերեզմանատեղիի, զոհված տղաների համար կառուցված հուշաքարի տարածքի բարեկարգում, ԵԿՄ Քաջարանի տարածքային բաժանմունքի շենքի վերանորոգում եւ այլն:
Թե՛ կամավորականների, թե՛ տարածաշրջանում տեղակայված զորամասերի հետ շփումը պետք է բարձր մակարդակի հասցնել, ինչը կնպաստի նաեւ ապագա սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակությանը:
Իմ թեկնածուն քիչ խոսող, բայց աշխատող մարդ է, եւ համոզված եմ, ընտրվելու դեպքում քաղաքում լուրջ բարեփոխումներ կիրականացնի թե՛ սոցիալ-տնտեսական զարգացման, թե՛ հոգեւոր-մշակութային կյանքի աշխուժացման եւ թե՛ քաղաքացիների հանգստի ու ազատ ժամանցի կազմակերպման գործում:
Ժամանակն է՝ խոսքից գործին անցնելու…

Քաջարան համայնքի ղեկավարի թեկնածու Մանվել Փարամազյանի նախընտրական ծրագրի հիմնադրույթները

Համայնքի բարեկարգում եւ կառուցապատում

- Բակերի բարեկարգում
- Փողոցների ասֆալտապատում եւ բարեկարգում
- Փողոցների եւ բակերի լուսավորության անցկացում
- Միջշենքային տարածքներում մանկական խաղահրապարակների կառուցում
- Համայնքում կառուցապատման նորմատիվների հաստատում

Բնակարանային ֆոնդի արդիականացում

- Վերելակային տնտեսության արդիականացում եւ սպասարկում
- Շենքերի տանիքների վերանորոգում
- Շենքերի շքամուտքերի եւ ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգում
- Բազմաբնակարան շենքերի արտաքին տեսքի բարելավում
- Բազմաբնակարան շենքերի արդիականացում էներգախնայող եւ ջերմամեկուսացնող տեխնոլոգիաներով

Կոմունալ ծառայությունների բարելավում

- Ջրամատակարարման, կոյուղու, կապի, էլեկտրամատակարարման եւ գազամատակարարման ցանցերի արդիականացում
- Աղբահանության բարելավում
- Ներշենքային աղբատարների վերանորոգում եւ բարեկարգում

Բարեկեցության ապահովում եւ սոցիալական աջակցություն

- Կանանց եւ երիտասարդների զբաղվածության խնդրի աստիճանական լուծում
- Ներդրումային բարենպաստ միջավայրի ապահովում
- Ձեռնարկատիրության խրախուսում
- Սոցիալապես խոցելի խմբերին աջակցություն
- Առողջապահական ծառայությունների բարելավում
- Աջակցություն երիտասարդների եւ տարեցների սոցիալական խնդիրների լուծմանը
- Միայնակ տարեցների, սահմանափակ կարողություններով անձանց սոցիալական եւ կենցաղային խնդիրները հոգալու նպատակով սոցիալական ծառայողների եւ այլ մասնագետների ներգրավում

Էկոլոգիապես մաքուր միջավայր

Կներդրվի կառավարման նոր մշակույթ, որի պայմաններում յուրաքանչյուր քաջարանցի կկարողանա մասնակցել հայրենի քաղաքի կառավարման գործին

- Համայնքի կառավարման գործընթացը կկազմակերպվի թափանցիկության եւ քաղաքացիների լայն ներգրավման սկզբունքներով
- Կթարմացվի եւ նոր գործիքներով կհամալրվի Քաջարանի քաղաքապետարանի պաշտոնական kajaran.am կայքը
- Ավագանու նիստերը կլինեն բաց, յուրաքանչյուր քաջարանցի հնարավորություն կունենա մասնակցել նիստերին, կապահովվի Քաջարանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում դրանց առցանց հեռարձակման տեխնիկական հնարավորությունը
- Կկիրառվեն համայնքային խնդիրների լուծմանը քաղաքացիների մասնակցության ավանդական (բակային հանդիպումներ, քաղաքացիների ընդունելություններ, դիմումներ, նամակներ եւ այլն) եւ ժամանակակից տեխնոլոգիական (էլեկտրոնային նամակներ, ՍՄՍ հաղորդագրություններ եւ այլն) մեթոդները
- Համաքաղաքացիների ներգրավմամբ կապահովվի բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացնող համատիրության գործունեության արդյունավետությունը
- Քաղաքապետարանի աշխատակազմում եւ համայնքապատկան ձեռնարկություններում թափուր հաստիքների համալրումը կկատարվի թափանցիկ մրցույթների միջոցով
- Կհաստատվի եւ կխորացվի համագործակցությունը տեղական հասարակական կազմակերպությունների հետ, սոցիալական ծրագրերի իրականացման գործում վերջիններիս ակտիվ ներգրավվածության ապահովում
- Համագործակցություն կհաստատվի հանրապետության այլ համայնքների

Արդյունավետ կառավարում

Բարեկարգ եւ արդիականացված համայնք

ՄԻԱՍԻՆ՝ ՀԱՆՈՒՆ ՔԱՋԱՐԱՆԻ

էջ 12

Հայոց վրիժառության առաքյալը

Գորիսում հավերժացվեց հայ ժողովրդի մեծանուն զավակ Շահան Նաթալիի հիշատակը

Սեպտեմբերի 1-ին Գորիսի պետական համալսարանի գլխավոր մասնաշենքի բակում, ուսանողների, հյուրերի, Գորիս քաղաքի բնակիչների մասնակցությամբ ու հանդիսավոր արարողությամբ, բացվեց Շահան Նաթալիի (Հակոբ Տեր-Հակոբյանի) հուշարձանը:

Մեծ հայի հիշատակը հավերժացնելու նախաձեռնողը եւ աշխատանքների հովանավորն ու կազմակերպիչը Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանն էր:

Մոտ չորս տարի առաջ հղացած այս գաղափարն իրականացնողը մեր հայրենակից, երիտասարդ քանդակագործ Նարեկ Օրդյանն է, ով հանրությանը հայտնի է Սուրբ Գրիգոր Տաթեւացու հուշակոթողի պատրաստմամբ (2010թ. հոկտեմբերի 16, տեղադրված է Գորիս քաղաքի կենտրոնական հրապարակում): Նարեկ Օրդյանը Սպարապետ Վազգեն Սարգսյանի բրոնզաձույլ արձանի քանդակագործն է նաեւ. արձանը 2015թ. ապրիլի 2-ին տեղադրվել է Կապանի Բաղաբուրջի հուշահամալիրում՝ Արցախյան ազատամարտում նահատակված կապանցիների պանթեոնում:



Շահան Նաթալիի արձանը նույնպես բրոնզաձույլ է, այն, հիրավի, չքնաղ մի ստեղծագործություն է՝ դրված 1,8 մ բարձրության բազալտե պատվանդանի վրա:

Հուշակոթողի բացման պատիվը տրվեց քանդակագործին եւ Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Արտուշ Ղուկասյանին:

Շահան Նաթալիի կյանքի եւ գործունեության մասին ելույթներ ունեցան Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը, «Սյունյաց երկիր» թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը, Գորիսի պետական համալսարանի ռեկտոր Արտուշ Ղուկասյանը, ՀՀ պաշտպանության նախարարության «Մայր Հայաստան» ռազմական թանգարանի տնօրեն Ավագ Հարությունյանը, Գորիսի պետական համալսարանի հումանիտար եւ հասարակական մասնագիտությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Թեհմինա Մարությանը, «Ակսել Բակունց» հիմնադրամի նախագահ Սամվել Հարությունյանը:

Համալսարանի ուսանողուհի Սոնա Ալավերդյանն ընթերցեց հատված Շահան Նաթալիի «Նոր երգ երգոց» բանաստեղծությունից, որի մեջ արտացոլված են հեղինակի էությունը, նպատակները, իր իսկ դավանած գաղափարների հիմնական ուղղությունները եւ պատգամը սերունդներին:

…Արեւմտյան Հայաստանի Խարբերդի շրջանի Հուսենիկ գյուղում 1884թ. ծնված Հակոբ Տեր-Հակոբյանն ականատեսն էր Արեւմտյան Հայաստանում 1895-97թթ. համիդյան ջարդերի, որի ընթացքում զոհված մոտ 300 հազար հայերի մեջ էին նրա հայրը, մորեղբայրը եւ բազմաթիվ ազգականներ: Հոր դիակի վրա ողբացող մոր պատկերը՝ այդ օրերի սահմռկեցուցիչ մյուս տեսարանների հետ, ամբողջ կյանքում ուղեկցեցին նրան:

Երեխա հասակում որբացած եւ վրեժխնդիր լինելու վճիռ ընդունած Շահան Նաթալին իր անելիքների մեջ առավել հաստատուն դարձավ Մեծ եղեռնի սարսափների մասին ԱՄՆ-ում լսելուց հետո: Իսկ վճիռն այսպիսին էր՝ անպատիժ չթողնել ցեղասպաններին, եթե աշխարհը չցանկանա պատժել նրանց:

Եվ այդպես՝ Մեծ եղեռնի գլխավոր պատասխանատուներին պատուհասելու հարցը դարձավ նրա կյանքի ամբողջ նպատակն ու իմաստը:

Հենց նրա նախաձեռնությամբ կազմվեց մոտ 200 թուրք ճիվաղի սեւ ցուցակը, ովքեր էլ պատասխան տվեցին ու գետնվեցին հայոց վրիժառուների ձեռքով՝ սկսած գլխավոր հայակեր Թալեաթ, Ջեմալ, Էնվեր փաշաներից մինչեւ Հայոց ցեղասպանության գաղափարախոս Բեհաէդդին Շեքիր բեյ…

Երբ 1961-ին Նաթալին եկավ Հայաստան, Ծաղկաձորում հանդիպեց ճամբար դրած մի խումբ դպրոցականների: Նրանց մեջ էլ, բնականաբար, տեսավ հայության վաղվա օրը, նոր արեւածագը: Երեւի այդ իրողությունն էին հաշվի առել դրվատելի այս նախաձեռնության հեղինակները՝ Շահան Նաթալիի ոգեղեն վերադարձի ու ոգեկոչման վայր ընտրելով Գորիսի պետական համալսարանի բակը: Այդտեղով հարյուրավոր ուսանողներ կանցնեն ամեն օր եւ կամա թե ակամա կհաղորդվեն մեծ ու արժանապատիվ հայորդու, հայոց ազգային հերոսի վեհ կերպարին:

Եվ, այդուհանդերձ, հետաքրքիր էր իմանալ, թե ինչպես հղացավ Շահան Նաթալիի հիշատակը հավերժացնելու՝ տասնամյակներով ուշացած եւ սպասված գաղափարը: Այդ առիթով ահա թե ինչ ասաց Սուրեն Խաչատրյանը. *«Շահան Նաթալին մահացավ 99 տարեկանում՝ 1983թ. ապրիլի 18-ին, Բոստոնում: Այնտեղ էլ հերոսի հոգնատանջ մարմինը հողին հանձնվեց: Բայց նրա կյանքն ու գործը գրեթե անհայտ մնացին հայ ժողովրդի լայն շրջանակներին, նրա հիշատակը չհարգվեց ու չհավերժացվեց ըստ պատշաճի: Մինչդեռ նա կատարեց այն, ինչ հրամայում էին 1,5 մլն նահատակ հայերի հոգիները, ինչը պարտավոր էին կատարել ողջերը: Շահան Նաթալին, առանց չափազանցության, հայոց Նեմեսիսն էր՝ հունական դիցաբանության մեջ հայտնի արդար բարկության աստվածը: Մենք պարտավոր էինք գոնե ուշացումով հավերժացնել նրա անմեռ հիշատակը եւ հավերժացրինք»:*

Ասվածին հավելենք՝ Շահան Նաթալին թողել է նաեւ գրական հարուստ ժառանգություն, քանզի գրական շնորհներ, վերլուծական, քաղաքագիտական բացառիկ կարողություններ ուներ: Եկել է ժամանակը, որ այդ ամենն ամբողջացվի ու հրատարակվի, դրվի ընթերցողի սեղանին, ինչը կլինի նրա հիշատակի հավերժացման եւս մեկ ակնառու քայլ:

ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հոկտեմբերի 2-ին համայնքի ղեկավարի համար առավել սուր պայքար կծավալվի Անտառաշատում, Կապանում եւ Սիսիանում

Սեպտեմբերի 2-ին ավարտվել է թեկնածուների առաջադրումը Սյունիքի մարզի այն համայնքներում, որտեղ ս.թ. հոկտեմբերի 2-ին կանցկացվեն տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններ:

Կապան համայնքի ղեկավարի թեկնածու են առաջադրվել Արտուր Աթայանը (առաջադրել է ՀՅԴ կուսակցությունը), Աշոտ Հայրապետյանը (առաջադրել է ՀՀԿ-ն), ԲՀԿ անդամ, զինվորական կենսաթոշակառու Արթուր Մարտիրոսյանը (ինքնառաջադրում):

Սիսիան համայնքի ղեկավարի թեկնածու են առաջադրվել Սրբուհի Գրիգորյանը (առաջադրել է Լուսավոր Հայաստան կուսակցությունը), Աղասի Հակոբջանյանը (ինքնառաջադրում), Սիսիանի համայնքապետարանի գլխավոր մասնագետ Կամո Մանուչարյանը (ինքնառաջադրում), Արթուր Սարգսյանը (ինքնառաջադրում):

Համայնքի ղեկավարի թեկնածուներ են առաջադրվել նաեւ Ագարակ (գյուղական), Աղիտու, Անգեղակոթ, Անտառաշատ, Առաջածոր, Բալաք, Բնունիս, Բռնակոթ, Գեղանուշ, Գեղի, Գետաթաղ, Դաստակերտ, Դավիթբեկ, Եղվարդ, Թասիկ, Իշխանասար, Լեռնածոր, Լծեն, Խդրանց, Ծավ, Մուցք, Ներքին Խոտանան, Ներքին Հանդ, Նոր Աստղաբերդ, Նորաշենիկ, Նորավան, Շաղատ, Շաքե, Շենաթաղ, Շիկահող, Շրվենանց, Որոտան (Սիսիան), Ույծ, Սալվարդ, Սեւաքար, Սյունիք, Սրաշեն, Վաղատին, Վանեք, Վերին Խոտանան, Տանձավեր, Տավրուս, Տոլորս, Քաջարան (գյուղական), համայնքներում:

Ըստ նախնական տեղեկությունների՝ Կապանում պայքար կծավալվի նաեւ ավագանու անդամի 15 մանդատի համար. մրցապայքարի է ելել 31 հոգի: Առաջադրվածներից 18-ն անկուսակցական է, 5-ը՝ ՀՀԿ անդամ, 5-ը՝ Քաղաքացիական պայմանագիր կուսակցության անդամ, 2-ը՝ ՀՅԴ անդամ, 1-ը՝ ԲՀԿ անդամ:

Սիսիան համայնքում 22 հոգի կպայքարի ավագանու 15 տեղի համար: Առաջադրվածներից 2-ը ՀՀԿ անդամ է, 18-ը՝ անկուսակցական, 1-ը՝ Միացյալ ազատական ազգային կուսակցության անդամ, 1-ը՝ ՀՅԴ անդամ, 1-ը՝ ԲՀԿ անդամ:

Ավագանու անդամի թեկնածուներ են առաջադրվել նաեւ Ագարակ (գյուղական), Ախլաթյան, Աղիտու, Աղվանի, Աճանան, Անգեղակոթ, Աշոտավան, Առաջածոր, Արծվանիկ, Բալաք, Բնունիս, Բռնակոթ, Գեղանուշ, Գեղի, Գետաթաղ, Դաստակերտ, Դավիթբեկ, Դարբաս, Եղվարդ, Թանահատ, Թասիկ, Լեռնածոր, Լծեն, Լոր, Խդրանց, Ծավ, Կաղնուտ, Հացավան, Ձորաստան, Մուցք, Ներքին Խոտանան, Ներքին Հանդ, Նորաշենիկ, Շաղատ, Շաքե, Շենաթաղ, Շիկահող, Շրվենանց, Ուժանիս, Ույծ, Սալվարդ, Սեւաքար, Սյունիք, Սրաշեն, Վաղատին, Վանեք, Վարդավանք, Վերին Խոտանան, Տանձավեր, Տավրուս, Տոլորս, Քաջարան (գյուղական), Օխտար համայնքներում:

Սեպտեմբերի 9-ին կավարտվի առաջադրված թեկնածուների գրանցումը, իսկ սեպտեմբերի 14-ից կմեկնարկի թեկնածուների նախընտրական քարոզչությունը:

Սույն ընտրարշավը, կարելի է ասել, ունի մի քանի առանձնահատկություն: Դրանցից մեկն անկուսակցականների աննախադեպ ակտիվությունն է Կապան եւ Սիսիան համայնքների ավագանու անդամի մանդատի համար մղվող մրցապայքարում:

Ուշագրավ է նաեւ, որ Սիսիանի համայնքի ղեկավարի թեկնածու չի առաջադրել իշխող ՀՀԿ-ն:

Կապանում, ըստ էության, քաղաքական ասպարեզ իջնելու փորձ է անում Քաղաքացիական պայմանագիր կուսակցությունը, որի հանդեպ հանրության վերաբերմունքը կերեւա հոկտեմբերի 2-ին:

«ՍՅՈՒՆՅԱՑ ԵՐԿԻՐ»

Կարեն Լազարյանը՝ Գորիս համայնքի ավագանու անդամի թեկնածու

ԿԱՐԵՆ ԼԱԶԱՐՅԱՆ
Գորիսի պետական քոլեջի տնօրեն

Խոսք Գորիս համայնքի ընտրողներին

Սիրելի հայրենակիցներ

Ես նույնպես առաջադրել եմ թեկնածությունս Գորիս նորաստեղծ համայնքի՝ սեպտեմբերի 18-ին կայանալիք ընտրություններում:

Եվ պարտքս եմ համարում ներկայանալ ձեզ ու որոշ հարցերի վերաբերյալ հայտնել դիրքորոշումս կամ պատկերացումներս:

Ճիշտ է, մեկ անգամ արդեն եղել եմ Գորիս քաղաքի ավագանու անդամ (2008-2012թթ.), 2009 թվականից էլ գլխավորում եմ Գորիսի պետական քոլեջը, ու իմ մասին կարծիք կազմելու, դատողություններ անելու որոշակի հիմքեր շատերդ ունեք, քանզի բոլոր այդ գործերում ձեր աչքի առաջ եմ եղել ու կամ: Բայց վերստին ներկայանալու խնդիր կա, քանի որ խոսքը նոր ձեւավորվող համայնքի մասին է, այդ համայնքի ինքնակառավարման մարմնի՝ ավագանու մասին:

Իհարկե, ամբողջ հանրապետությունում ավագանու ինստիտուտը դեռ հեռու է լիարժեք կայացած լինելուց, եւ որեւէ համայնքի ավագանի դժվար թե կարողանա լիովին արդարացնել ընտրողի սպասելիքները: Բայց «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքը, նաեւ ՀՀ նորացված սահմանադրությունը հնարավորություն են տալիս ավագանուն՝ իրական, գործնական ազդեցություն ունենալ համայնքային կյանքի, համայնքի ղեկավարի իրականացրած քաղաքականության վրա: Դրանում համոզվելու համար կարելի է ծանոթանալ թեկուզ եւ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 2-րդ գլխին, որտեղ ամրագրված են ավագանու իրավունքներն ու պարտականությունները, ինչին սույն դիմումի մեջ մանրամասն անդրադարձ կատարելը ոչ տեղին եմ համարում:

Արդեն ասացի, որ գործ ունենք միանգամայն նոր վարչական միավորի՝ նոր համայնքի հետ:

Ինձ թույլ եմ տալիս փաստել, որ հարկ եղած չափով ճանաչում եմ ոչ միայն Գորիս քաղաքը, այլեւ համայնքի մեջ մտնող բոլոր գյուղերը՝ Ակները, Վերիշենը, Խնձորեսկը, Ներքին Խնձորեսկը, Հարթաշենը, Քարահունջը, Որոտանը, Բարձրավանը, Շուռնուխը (Աղբուլաղն ու Վանանդը, բնակեցված չլինելու պատճառով, խոսակցության առանձին թեմա են):

> *Քաջատեղյակ եմ համայնքի մեջ մտնող բնակավայրերից յուրաքանչյուրի հիմնախնդիրներին, մարդկանց մտահոգություններին, զարգացման՝ մինչեւ այժմ ընդունված (եղած) ծրագրերին, վերջին տարիներին այդ բնակավայրերում կատարված աշխատանքներին: Ասել է թե՝ միջավայրն ինձ համար հարազատ է ու ծանոթ, անելիքներիս դաշտը՝ տեսանելի:*

Այնուհետեւ՝ համաձայն եմ համայնքների խոշորացման ներկա ռազմավարությանը: Ավելին՝ ողջամիտ կլիներ, եթե Գորիսի երբեմնի վարչական շրջանի մեջ մտնող բոլոր բնակավայրերը միավորվեին մեկ եւ ոչ երեք համայնքի մեջ՝ Գորիս, Տաթեւ, Տեղ:

Դրա հետ մեկտեղ, վստահ եմ, որ համայնքների միավորման արդյունքում ստեղծված նոր՝ Գորիս համայնքում ամեն մի գյուղ, ինչպես եւ Գորիս քաղաքը, բազում ընդհանուր խնդիրներ, շահեր ու հետաքրքրություններ ունենալով հանդերձ, պետք է գնան զարգացման իրենց՝ սեփական ճանապարհով, դարերով ձեւավորված դեմքն ու նկարագիրը, ավանդույթները պահպանելու ուղիով:

Խորապես համոզված եմ՝ որքան էլ ժամանակներն ու առաջնահերթությունները փոխվեն, միեւնույն է, Հայաստանի Հանրապետության վաղվա օրը պայմանավորված է կենսունակ գյուղերով: Այնպես որ՝ նորաստեղծ համայնքում պետք է աջակցենք մեր գյուղերի զարգացմանը, որ այնտեղ բնակվելն ու արարելը լինի ոչ պակաս գրավիչ:

Այլ է Գորիս քաղաքը: Այն ոչ միայն մարզի, այլեւ հանրապետության հոգեւոր-մշակութային խոշոր կենտրոններից է եւ, ինչ-որ չափով, մեր ժողովրդի բազմադարյան պատմության խտացված արտահայտությունը, հայոց մեծերից շատերի բնօրրանը: Եվ Գորիս քաղաքի առջեւ ծառացած բազում հիմնախնդիրները, լուծման կարոտ հարցերը պետք է լինեն ավագանու ուշադրության կենտրոնում: Իսկ խնդիրները Գորիս քաղաքում իրոք որ շատ են:

Վերջին շրջանում, կարծես, մի քիչ շատ ենք տարվել զբոսաշրջության մասին խոսակցություններով՝ այդ ոլորտում փնտրելով տարբեր հարցերի լուծման բանալին: Իհարկե, զբոսաշրջությունը լավագույն ուղին է մեր պատմամշակութային արժեքները, դիտարժան վայրերն աշխարհին ներկայացնելու համար, եւ պետք է նպաստել դրա

ԱՅՍՔԱՐՏ

Կարեն Սամվելի Լազարյան.
ծնվել է 1979թ. նոյեմբերի 7-ին Գորիս քաղաքում:
Գորիսի N3 միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1996թ. ընդունվել է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ, որն ավարտել է 2000 թվականին՝ ստանալով ֆիզիկական կուլտուրայի դասատուի եւ աթլետիկայի մարզչի որակավորում:
Այնուհետեւ զորակոչվել է բանակ եւ 2000-2002թթ. ծառայել Արմավիրում, Վայքում ու Խաչիկում (պահեստազորի լեյտենանտ է):
Զորացրվելուց մեկ տարի անց, որպես ֆիզիկական կուլտուրայի դասախոս, աշխատանքի է անցել «Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում:
2009թ. ապրիլի 14-ին մրցույթով ընտրվել է նույն քոլեջի տնօրեն, վերընտրվել 2015թ. հոկտեմբերի 8-ին:
Աշխատանքին զուգահեռ 2010-15թթ. սովորել է Գորիսի պետական համալսարանի պատմաիրավագիտական ֆակուլտետի իրավագիտություն բաժնում՝ ստանալով ուսուցչի, մանկավարժության բակալավրի աստիճան՝ «Իրավագիտություն» մասնագիտությամբ:
2015-16 ուսումնական տարվանից, աշխատանքին զուգահեռ, սովորում է Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի բանասիրական ֆակուլտետի մագիստրատուրայում:
2008թ. հոկտեմբերի 12-ին ընտրվել է Գորիս քաղաքի ավագանու անդամ:
2014թ. ապրիլի 4-ին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով պարգեւատրվել է «Գարեգին Նժդեհ» մեդալով,
2015թ. դեկտեմբերի 30-ին՝ պատվոգրով՝ «Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակության գործում ունեցած մասնագիտական առաջընթացի եւ ներդրած կազմակերպչական աշխատանքների համար»:
2015թ. հունվարի 6-ին՝ Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության օրը, Այունյաց թեմի առաջնորդական տեղապահ Մակար վարդապետ Հակոբյանի առաջարկով, մեկ տարի ժամանակով, ստանձնել է Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու «Խաչի քավոր»-ի պարտականությունը:
Ամուսնացած 2006 թվականից, ունի երկու դուստր եւ մեկ որդի:
Անկուսակցական է:

Սիրելի գորիսեցիներ Սեպտեմբերի 18-ին քվեարկենք Գորիս համայնքի ավագանու անդամի արժանավոր թեկնածու Կարեն Սամվելի Լազարյանի օգտին:

Նախընտրական շտաբ

(ենթակառուցվածքներով հանդերձ) զարգացմանը: Բայց դրանով չենք կարող հասնել քաղաքի գլխավոր խնդրի՝ զբաղվածության խնդրի շատ թե քիչ կարգավորմանը:

Ողջամիտ եւ իրատեսական ուղին, կարծում եմ, փոքր ու միջին ձեռներեցության զարգացումն է, նոր աշխատատեղերի ստեղծումը, որը Գորիս քաղաքում կհանգեցնի զբաղվածության խնդրի եթե ոչ ամբողջական լուծման, ապա գոնե իրավիճակի մեղմացման:

Ես կրթության ոլորտի մարդ եմ եւ գիտեմ, թե մեր համայնքում ինչպիսի խնդիրներ ու հոգսեր կան կրթության, մշակույթի բնագավառներում, երիտասարդության հետ տարվող աշխատանքում, հոգեւոր կյանքում, սպորտային ու մարզական ոլորտում: Եղել ու մնում եմ այն տեսակետի ջատագովը, որ հենց այդ ճակատում է որոշվում (որոշվելու) հայ ժողովրդի ճակատագիրը, հենց այդ ոլորտներով է անցնում մեր ազգային լինելիության ճանապարհը:

Հանրային համերաշխությունը, հանդուրժողականությունը, միմյանց հանդեպ հարգանքն ու պատկառանքը, գորիսյան շահերի շուրջ համախմբվածությունն ու միասնությունը մեր ընթացքի գլխավոր բաղադրիչներից են: Իսկ համայնքի ավագանին պետք է լինի դրա երաշխավորը:

Մերժում եմ տեղայնամոլությունը, նոր համայնքի բնակիչներին ըստ բնակավայրերի դասելու որոշ մարդկանց մարմաջը՝ գորիսեցի, խնձորեսկցի, վերիշենցի, քարահունջցի, հարթաշենցի… Մեր համայնքը փոքր է, եւ այնքա՜ն քիչ ենք ու այնքա՜ն թելերով ենք միմյանց կապված, որ տրոհվելու, տարանջատվելու, բաժան-բաժան լինելու ցանկացած մոլուցք եւ դրսեւորում դատապարտելի պիտի լինեն: Բոլորս մենք ենք, եւ միասին լինելու, ընդհանրական շահերով ապրելու, միմյանց հավատալու եւ նեցուկ լինելու ավելի շատ հիմքեր ունենք:

Ո՞վ է ասել, որ ավագանու՝ Գորիս քաղաքից ընտրված անդամը չի կարող արժանապատվորեն ներկայացնել համայնքի գյուղերի շահերը: Եվ հակառակը՝ մի՞թե ավագանու՝ գյուղերից ընտրված անդամը չի կարող ըստ պատշաճի արտահայտել Գորիս քաղաքի շահերը:

> *Սեպտեմբերի 18-ին ոչ թե ըստ գյուղերի, ըստ գերդաստանների կամ ըստ ազգուտակի համախմբվելու պահն է, այլ ավագանու անդամի թեկնածուների արժանիքները, ծրագրերը, կարողությունները նժարելու, համադրելու եւ, ի վերջո, համայնքի շահերին համահունչ դիրքորոշում որդեգրելու ու դրանով իսկ առաջնորդվելու օր է:*

Ենթադրում եմ, որ համայնքի նորընտիր ղեկավարն ու նորընտիր ավագանին կաշխատեն սերտ համագործակցությամբ, ձեռք ձեռքի տված, ինչը պահանջում է համայնքի շահը: Կարծիքների, դիրքորոշումների բազմազանությունը, առկա խնդիրների վերաբերյալ ստեղծագործական մոտեցումը, այլընտրանքային դատողություններն ու ծրագրերը միայն զորություն կբերեն ե՛ւ ավագանուն, ե՛ւ համայնքի ղեկավարին:

Համայնքապետն ու իր աշխատակազմը, ավագանին եւ ընդհանրապես համայնքապետարանը պարտավոր են հուսալի եւ անկեղծ գործընկեր լինել համայնքի ամեն մի բնակչի համար՝ անկախ կուսակցական պատկանելությունից, անկախ քաղաքացիական դիրքորոշումից: Մի խոսքով՝ համայնքապետարանը համայնքի յուրաքանչյուր բնակչի գործընկերն ու հույսի դուռն է: Նախեւառաջ համայնքապետարանում յուրաքանչյուր ոք պետք է լսելի լինի, եթե նույնիսկ հնարավոր չլինի բարձրացված հարցերի լուծումը:

Հասկանում եմ՝ միայն այսպես խոսելով չէ: Համայնքի ավագանու անդամը պարբերաբար պետք է լինի գյուղերում, քաղաքի թաղամասերում եւ կոլեկտիվներում, որպեսզի կարողանա ժամանակին համընթաց քայլել, որպեսզի կարողանա մարդկանց իրական հոգսերի կրողը լինել, այլապես նա չի կարող ո՛չ ավագանու նիստում, ո՛չ առօրյա գործերում համայնքի բնակիչների մտածումներին համահունչ վարք դրսեւորել:

Համայնքի ավագանու գործունեությունը, սկզբունքայնությունը մեծ չափով կախված է հենց համայնքի ընտրողներից, բնակիչներից: Համայնքի ընտրողներն ավելի շատ կարող են մասնակցել ավագանու նիստերին, համայնքի համար սկզբունքային նշանակություն ունեցող հարցերի քննարկմանը: Մինչեւ հիմա այդ առումով, որքանով տեղյակ եմ, անտարբերության սառույց կա: Բայց ժամանակն է, որ ընտրողը՝ իր սթափեցնող ներկայությամբ, գոնե երբեմն-երբեմն հետաքրքրվի ավագանու գործունեությամբ, մասնակցի ավագանու նիստերին, մանավանդ որ թափանցիկ գործելակերպն ավագանու աշխատանքի հիմնարար դրույթներից մեկը պետք է լինի:

Համայնքի կենտրոնավայրը, բնականաբար եւ արդարացիորեն, Գորիս քաղաքն է: Համայնքի գյուղերի բնակիչները, մինչդեռ, պետք է կարողանան իրենց առօրյա հարցերը՝ տեղական իշխանության հետ կապված, առավելապես լուծեն տեղում եւ ոչ թե Գորիս գնալգալով: Հակառակ պարագայում դժվար կլինի գյուղերի բնակիչների համար: Իսկ դա նշանակում է, որ ավագանին, իր լիազորությունների սահմաններում համայնքի ղեկավարի աշխատակազմի կառուցվածքը հաստատելիս, նկատի պետք է առնի այդ հանգամանքը եւս:

Ավագանին իր գործունեության մեջ երբեք չի կարող մոռանալ այն իրողությունը, որ Գորիս քաղաքն ու մերձակա գյուղերն ամենաակտիվ մասնակցությունն ունեցան Արցախյան պատերազմին: Գորիսեցու հերոսական պոռթկումին մասնակից եւ ականատես եղանք այս տարվա ապրիլյան պատերազմի օրերին նույնպես:

Տագնապալից մեր ժամանակներում ավագանին՝ իր լիազորությունների սահմաններում, պետք է լինի հայոց ազգային բանակի՝ տարածաշրջանում տեղաբաշխված ստորաբաժանումների, զինծառայողների, պատերազմի վետերանների, նահատակ զինվորների հարազատների ու մերձավորների կողքին:

Սիրելի հայրենակիցներ

Ես, փաստորեն, իմ ծառայությունն եմ առաջարկում ձեզ՝ համոզված լինելով, որ ասելիք ու անելիք ունեմ, որ կարող եմ ամենայն պատասխանատվությամբ կատարել համայնքի ավագանու անդամի պարտականությունները, որ կարող եմ բարձր պահել մեր փոքր հայրենիքի՝ Գորիսի, Ակների, Վերիշենի, Խնձորեսկի, Ներքին Խնձորեսկի, Հարթաշենի, Քարահունջի, Որոտանի, Բարձրավանի, Շուռնուխի անունը, եւ լինել նրա նվիրյալն ու անկեղծ մշակը:

Դրա համար յուրաքանչյուրիդ վստահության քվեն եմ հայցում:

Դրա համար հարկավոր է, որ սեպտեմբերի 18-ին քվեարկեք իմ օգտին:

Բարի ընտրություն բոլորիս:

31 օգոստոսի 2016թ.

Լույս՝ թունելի վերջում

Մանուչար Միքայելի Մկրտչյանը 2005 թվականից Սառնակունք համայնքի ղեկավարն է: Մի քանի օրից Սպանդարյան, Սառնակունք, Ծղուկ, Գորայք համայնքները՝ միավորված մի համայնքի մեջ, անց կկացնեն նոր, խոշորացված համայնքի ավագանու եւ համայնքի ղեկավարի ընտրություններ: Մեր հանդիպումը Սառնակունքի համայնքի արդեն նախկին ղեկավարի եւ նոր՝ խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրվելու համար իր թեկնածությունն առաջադրած Մանուչար Մկրտչյանի հետ նպատակ ուներ պարզելու, թե համայնքի համար ինչ է արել տասը տարուց ավելի համայնքը ղեկավարած անձնավորությունը, ինչ կարծիք ունի նա համայնքների միավորման (խոշորացման) մասին, ինչպես է պատկերացնում նոր համայնքի զարգացման հեռանկարը եւ բազմաթիվ այլ հարցեր:

Մասնագիտության ընտրության օրից (ավարտել է Երեւանի գյուղատնտեսական ինստիտուտի մեխանիզացիայի ֆակուլտետը) նա իր կյանքն ընդմիշտ կապել է գյուղի հետ: Ցածր ձայնով թվարկում է՝ այդ տարիներին կառուցվել է խմելու ջրի ներքին ցանցը, որի շնորհիվ համայնքի բոլոր տներն ապահովված են խմելու ջրով, իսկ խմելու ջրի առկայությունը հնարավորություն է տալիս լուծելու կենցաղային շատ հարցեր, բացվել եւ գործում է մանկապարտեզը, կառուցվել է հանդիսությունների սրահ՝ բոլոր հարմարություններով: Արածը հնարավորություն է տվել նրան, ինչպես ասում են, բաց ճակատով թեկնածությունն առաջադրել խոշորացված համայնքի ղեկավարի պաշտոնում ընտրվելու համար: Անելիքներն ավելի շատ են, քան արվածը: Դրանք էլ է թվարկում: Պատկերացում ունի նաեւ դրանցից շատերի իրականացման ուղիների մասին, բայց շտապել պետք չէ, ամեն ինչ իր հերթին:

Ասում են՝ առաջին տպավորությունը ճիշտ է լինում եւ որոշիչ: Մեր հանդիպման առաջին րոպեներից սկսած եւ ամբողջ զրույցի ընթացքում իմ մտորումների հետին պլանում մի սեւեռուն միտք էր պտտվում. ինչքան կշահեր հայ գյուղը, եթե նրա ղեկավարները լինեին Մանուչար Մկրտչյանի նման արհեստավարժ, նաեւ հայրենի եզերքը, նրա մարդկանց սիրող ղեկավարներ: Այո, այս անհատը գյուղին, գյուղացուն խիստ նվիրված, նրա հոգսերը ճանաչող, նաեւ դրանց լուծման ճանապարհներն իմացող մեկն է:

Համայնքի խոշորացման գործընթացը մեր հասարակությունը միանշանակ չի ընդունում, թերահավատները քիչ չեն, որովհետեւ այդ թերահավատների տառապանքը, ինչպես ասում են, փորձ ունի: Խորհրդային տարիներին էլ մի քանի գյուղի տնտեսություն արհեստականորեն միավորեցին եւ ստեղծեցին մի պետական տնտեսություն (սովխոզ), որի արդյունքում կենտրոն գյուղը գոյատեւեց, իսկ մնացած գյուղերը քայքայվեցին, մարդաթափվեցին:

Իրենց պարագայում Մանուչար Մկրտչյանը մտավախություն չունի, որովհետեւ այստեղ չորս համայնքի միավորումը մնացածների համեմատ ակնհայտ առավելություններ ունի: Թվարկում, հիմնավորում է դրանք: Նախ՝ բոլոր չորսն էլ գտնվում են հանրապետության ամենակարեւոր մայրուղու վրա: Դա մատչելի տրանսպորտային կապ է, նաեւ յուրահատուկ շուկա: Անկախացումից հետո տարածքի պետական ֆոնդի հողերը (Այունիքի մարզի ամառային արոտների մեծ մասը) վերաբաշխվել են Սիսիանի համայնքների միջեւ: Այսպես. Սառնակունքն ուներ 4000 հա հողատեսք, այսօր այն մեծացել է երեք անգամ՝ հասնելով 12 000 հա-ի: Եթե հաջողվեր այդ տարածքների թեկուզ մեկ երրորդը նույնիսկ ամենաէժան գնով վարձակալության տալ, ապա դա զգալիորեն կհամալրեր համայնքի բյուջեն: Բայց առայժմ պահանջարկը քիչ է. դա լուծելի հարց է, եւ սերտորեն կապված է անասնապահական մթերքների, հատկապես կաթի եւ մսի գնման հետ: Եթե կաթ ու միս գնող կազմակերպությունները բարեխղճորեն կատարեն իրենց պարտականությունները, ապա Գորիսի կամ տարածաշրջանի այլ համայնքների ֆերմերները հաճույքով արոտներ կվարձակալեն այդտեղ՝ իմանալով, որ իրենց արտադրած կաթն ու միսը հենց տեղում էլ իրացվելու են: Բայց «Աշտարակ կաթը», որ կաթի հիմնական գնորդն է, ամիսներով ուշացնում է վճարումը:

Երկրորդ՝ Ամուլսարի ոսկու հանքի շահագործման շնորհիվ համայնքի ֆինանսական հնարավորությունները բազմապատկվում են, որոնք խելացիորեն տնօրինելու դեպքում մի քանի տարվա մեջ հնարավոր կլինի լուծել չորս գյուղի՝ տասնյակ տարիներ շարունակ անլուծելի թվացող բազում հարցեր (խմելու, ոռոգման ջրատարների վերակառուցում, նորերի կառուցում, փողոցների արմատական բարեկարգում, գիշերային լուսավորության անցկացում եւ այլն): Բավական է ասել, որ Ամուլսարի մոտ 1000 հա մակերեսի վարձակալության դիմաց Գորայքի համայնքը տարեկան ստանում է 121 մլն դրամ, որը համայնքի խոշորացումից հետո համաչափորեն կօգտագործվի գյուղերի հոգսերը թեթեւացնելու համար:

Իսկ ամենակարեւորն աշխատատեղերի ստեղծման հարցն է: Մեր զրուցակիցը քաջատեղյակ է՝ այսօր Գորայքից 30 հոգուց ավելի մարդիկ մշտական աշխատանք ունեն: Հանքավայրում մյուս համայնքներից էլ աշխատողներ կան: Այս թվերը տարին տարուն աճելու են: Իսկ դա նշանակում է, որ գյուղում հարսանիքներ են լինելու, երեխա է ծնվելու, դպրոցը փակվելու վտանգից զերծ է մնալու, գյուղը շնչելու, ապրելու է… Եվ դա միայն Գորայքին չի վերաբերում:

Առաջիկայում խոշորացող համայնքը մնացած գյուղական համայնքների համեմատ մի այլ պատճառով էլ շահեկան վիճակում կհայտնվի: Հանրապետության տնտեսության մեջ ապագայում զգալի ներուժ ունեցող սուբյեկտներից երկուսը գտնվելու են այդ համայնքի վարչական տարածքում: Ամուլսարի մասին ասացինք, երկրորդը Սառնակունքի տարածքում կառուցվող ջերմակայանն է: Սկսվել են հորատման աշխատանքները, ծրագրված է մոտ 1500 մետր խորությունից կհանվի մոտ 200 աստիճանի ջրային գոլորշի, որի միջոցով էլ կգործարկվի ջերմակայանը: Ջրային գոլորշին հնարավոր կլինի օգտագործել նաեւ ջեռուցման նպատակներով:

Նոր ձեւավորվող այս համայնքի բնակավայրերը գտնվում են ծովի մակերեւույթից 2000 մ եւ ավելի բարձրության վրա: Այստեղ առաջին ձյունն իջնում է սեպտեմբերի վերջին-հոկտեմբերի սկզբներին, իսկ մայիսին դաշտերի մեծ մասը դեռ ծածկված է լինում սպիտակ սավանով:

Փաստորեն ջեռուցման սեզոնը տեւում է ութ ամիս, հավանաբար ավելի երկար, քան Սիբիրում: Վառելափայտ օգտագործելը թանկ, շատ թանկ հաճույք է: Փրկության է հասնում աթարը: Ծրագրի իրականացման բարեհաջող ելքի դեպքում կվերանան մայրուղու երկայնքով շարված աթարի փոքրիկ դեզերը, իսկ գոմաղբը գյուղացին կօգտագործի որպես պարարտանյութ:

Այսօր համայնքի վեց անդամ այստեղ մշտական աշխատանք ունի: Հաջորդ տարի այդ թիվը կբազմապատկվի:

Մեր զրույցի ընթացքում շատ հարցերի անդրադարձանք: Հրաժեշտից առաջ խնդրեցինք կարծիք հայտնել իր մրցակցի եւ համայնքի ղեկավար ընտրվելու նրա հնարավորությունների մասին: Ահա թե ինչ ասաց.

- Առուստամն իմ լավ ընկեր-բարեկամն է: Եթե ընտրությունների արդյունքում ինքը հաղթի, շնորհավորողների մեջ առաջինը ես եմ լինելու:

Գորայքում էլ Առուստամ Առուստամյանի հետ զրույցն ավարտելու վրա նրան էլ խնդրեցինք երկու խոսք ասել Մանուչար Մկրտչյանի մասին: Հետդարձի ճանապարհին Մանուչարին չհանդիպեցինք, եւ, բնականաբար, իր մրցակցի կարծիքը չկարողացանք փոխանցել նրան: Հիմա դա անում ենք լրագրային այս հոդվածի միջոցով: Իսկ այդ կարծիքը կարծես Մանուչարի խոսքերի հայելային արտացոլումը լիներ:

Երկու թեկնածուն էլ թունելի վերջում լույս են տեսնում:

ՌԵԴԻԿ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԱՌՈՒՍՏԱՄ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ.

«Թող ժողովուրդը ճիշտ ընտրություն կատարի, որ հետո չասի՝ էս իշխանությունը վատն է...»

Գնում ենք Սիսիանի տարածաշրջանի Գորայք գյուղ: Գյուղապետարան տանող ճանապարհին մարդ-մուրդ չկա: Ամենուր անդորր է: Եվ օրվա մեջ ծորացողը խաղաղության օրհներգն է, որ մեղրի նման ծորալով ծալ-ծալ նստում է ժամանակի շերտերի մեջ, դառնում օրվա նկարագիրը. մարդիկ առավոտ կանուխ բանջարանոցներում են, դաշտերում, արտերում:

Հիշում եմ ժողովրդական ասացվածքը. ամռան օրը տարի է կերակրում: Նույնիսկ երեխաներն են այս օրերին ծնողների կողքին: Դրա համար էլ շունչ-մունչ չկա գյուղում: Միայն մի կով, դունչը ծուլորեն մեկնել է դեպի խոտի դեզը եւ որոճում է: Թե ում դեզն է, դա կովի պետքը չէ, միայն նա խոտ ունենա այդ պահին: Կովի գեղեցիկ աչք-ունքը «գերեց» մեր լուսանկարիչ Արթուր Միրզոյանին. կովը հայտնվեց նրա լուսանկարչական օբյեկտիվում՝ տարբեր դիրքերից: Թերթի խմբագիր Սամվել Ալեքսանյանը քթի տակ ժպտում է. այն կարելի է այսպես թարգմանել՝ լավ էլ աչք ունի Արթուրը, առիթն էլ բաց չի թողնում:

Վերջապես մի մարդ երեւաց, այն էլ հեռվում՝ սպիտակ վերնաշապիկով, ալեխառը մազերով, բեխերով: Այստեղ եկեք՝ ծայնեց նա: Գորայքի գյուղապետ Առուստամ Առուստամյանն է: Հենց նա, ում հետ հանդիպելու համար Գորայք ենք ուղեւորվել: Նրա աշխատասենյակում ամեն ինչ կոկիկ է, վերանորոգված: Միայն չհրկիզվող պահարանն է հին-հին դարից հիշատակ մնացած: Կարդալով հայացքս ասում է՝ հաշվապահինն է: Նստել-վերկենալուց-խոսելուց երեւում է, որ կյանքի քուրայում եփված-թխված-թրծված մարդ է, հազար տեսակի մարդ ընդունած-ճանապարհած անձնավորություն: Ամերիկա էլ է հասել:

– Մեր խումբն Ամերիկայում եղավ յոթ հանքավայրում: Հանքարդյունաբերությունում օգտագործելով գերժամանակակից տեխնոլոգիաներ՝ նրանք իրենց գործելակերպով աշխարհին ցույց են տալիս, որ հանքերի շահագործումը բնավ էլ էկոլոգիական աղետ չէ: Նրանք հանքանյութի մշակումից հետո ջուրն օգտագործում են բանջարանոցները, այգիները, դաշտերը ոռոգելու համար: Մեծ աղմուկ հանած Ամուլսարի հանքավայրի շահագործման ժամանակ նման տեխնոլոգիա է կիրառվելու: Ամենակարեւորը մարդու առողջությունն է, հետո՝ փողը: Այնպես որ, Ամուլսարի շահագործումը ոչ միայն իր մեջ վտանգներ չի պարունակում, այլեւ տարածաշրջանի բնակավայրերը վերելք կապրեն: Այդտեղ մեծ թվով մարդ պետք է աշխատի եւ դա նաեւ շուտով խոշորացվող մեր համայնքից, որի մեջ մտնում են Գորայքը, Ծղուկը, Սպանդարյանը, Սառնակունքը: Անասնապահությունը հետին պլան չի մղվի: Այդ ճյուղը գյուղացիների համար կդառնա (ինչպես եւ եղել է, կա) իրենց բարեկեցության աճն ապահովող հիմնական գործոնը:

Ամուլսարը խոշոր միջազգային ներդրումային ծրագիր է: Այն իրականացնում է բրիտանական «Լիդիան Ինտերնեյշնլ» ընկերության դուստր ընկերությունը՝ «Լիդիան Արմենիան»: Այս ընկերությունը տարեկան 121 միլիոն դրամ է վճարում Գորայքին՝ հողերը վարձակալելու դիմաց: Առհասարակ, Գորայքի գյուղապետարանի բյուջեն, կարելի է ասել, կայուն, հարուստ բյուջե է: Եվ դա ոչ միայն Ամուլսարի շնորհիվ, այլեւ Բազարչայի արոտավայրերը վարձակալությամբ տալու միջոցով: Գյուղապետի կարծիքով բյուջեն էլ ավելի շատ փող կմտներ, եթե...

– Վարձակալել շատերն են ուզում, ուղղակի մարդիկ փող չունեն, փող տվող չկա: Մարդկանց ցանկությունն ու գրպանը չեն բռնում իրար:

Կայուն բյուջեի շնորհիվ Գորայքի գյուղապետարանը 1 միլիոն 600 հազար դրամի սահմաններում ներդրում է կատարել Լորում՝ Համո Սահյանի տուն-թանգարանի նորոգման գործում: Գորայքի 1 միլիոն 900 հազար դրամ ներդրումով է կառուցվել Լեռնաշեն (Շենաթաղ) գյուղի խմելու ջրագիծը: Ներդրումների ուրիշ հասցեներ էլ կարելի է հիշել…

Համայնքի ավագանու որոշմամբ գյուղում ծնվող յուրաքանչյուր երեխայի համար ծնողին տրվում է միանվագ գումար՝ 50000 դրամ, իսկ ամուսնացող զույգին՝ 100 հազար դրամ:

– Եթե դուք ընտրվեք խոշորացվող համայնքի ղեկավար, դարձյալ խրախուսելո՞ւ եք ամուսնությունները, նպաստելու ծնվող երեխաների սոցիալական վիճակի բարելավմանը՝ ձեր համայնքի մեջ մտնող նաեւ մյուս բնակավայրերում:

– Ծնողը չի կարող իր չորս երեխայից մեկին շոկոլադ տալ, մյուսներին՝ ոչ: Եթե կուզեք ճիշտն իմանալ, մյուս գյուղերն էլ կարող են նման նպատակների համար գումար գտնել: Ասել փող չկա ու մի կողմ քաշվել, ճիշտ չէ: Փողը պետք է ստեղծել: Այն մանանա չէ, որ երկնքից թափվի:

Խոսում ենք 1990-ականներին գյուղում իրականացված սեփականաշնորհման մասին:

– Այն ի սկզբանե սխալ էր իմ կարծիքով, ճիշտ հունով չի տարվել: Իմ մտածելակերպով հողը պիտի տային նրան, ով դրա լեզուն հասկանում է, անասունը՝ նրան, ով դրանից գլուխ է հանում: Ահա եւ դրա տխուր հետեւանքները, որ մինչեւ հիմա զգում ենք, եւ լավ արտահայտվում է մարդկանց սոցիալական նկարագրում: Եթե իմ ասած եղանակով ընթանար սեփականաշնորհումը, գյուղատնտեսությունը զարգացում կապրեր, գյուղացին հարուստ կլիներ եւ երեխայի ուսման վարձն էլ կտար, եւ հողի հարկն էլ:

– Համայնքների խոշորացման փաստն ինչպե՞ս եք ընդունում:

– Ես դեմ եմ դրան: Գյուղերի ճակատագիրը մտահոգություն է առաջացնելու: Տա աստված՝ ես սխալվեմ: Գորայքն անհանգստանալու խնդիր չունի: Այն տիպային գյուղ է, զարգացման հեռանկարներ ունի, եթե նույնիսկ կենտրոն էլ չլինի, նրան ծերացում չի սպասվում: Բայց մյուս գյուղերը...

Եվ պատմում է: Իր՝ համայնքի ղեկավար եղած ժամանակաշրջանում Գորայքը լրիվ ապահովվել է խմելու ջրով: Յուրաքանչյուր տուն ունի ջրի իր ծորակը: Նորոգել է կոյուղու ներքին ցանցը, կառուցել է կենցաղի տուն, երիտասարդության համար՝ ժամանցի կենտրոն, գյուղի փողոցներն ապահովված են գիշերային լուսավորությամբ: Այն գործում է մինչեւ գիշերվա ժամը 2-ը: Իսկ տոներին փողոցները լուսավորվում են ամբողջ գիշերը: Գյուղն ունի առողջության առաջնային պահպանման կենտրոն: Վերջին 5-6 տարում բնակչության աճ է գրանցվել: Այժմ գյուղում ապրում է 520 մարդ, իսկ առաջ՝ 420:

– Առուստամ Առուստամյանը կուսակցական չէ: Գործին չի՞ վնասում, արդյոք, նման փաստը:

– Ոչ: Կուսակցական պատկանելությունն ինձ համար երկրորդական է առհասարակ: Ժողովուրդը կուսակցականության համար չի ընտրում քեզ: Ժողովուրդը քեզ ընտրում է, որ իր դարդին դարման անես: Մեր գյուղում Հայաստանում գործող բոլոր կուսակցությունները, առանց բացառության, իրենց անդամներն ունեն: Կինս երբեմն մտնում է «քաղաքական դաշտ» ու ասում՝ այսինչը ՀՀԿ-ին ձայն չի տվել, այսինչը քեզ չի ընտրել: Իսկ դու բոլորին հավասար աչքով ես նայում: Ասում եմ՝ այ կնիկ, երկու տղա ունես, եթե մեկը գործ է անում, մյուսը՝ ոչ, էդ գործ չանողը քո տղեն չի՞:

– Սեպտեմբերի 18-ին արդար ընտրության ակնկալիք ունե՞ս:

– Անշուշտ, մեր գյուղն ամենակուսակցականացվածն է: Մեզ մոտ միշտ էլ ընտրություններն արդար են անցնում, ահա մի փաստ. Գորայքը համապետական ընտրությունների ժամանակ դառնում է բարոմետր. որ կուսակցությունը մեր գյուղում քանի տոկոս ձայն հավաքեց, այդ նույն տոկոսն էլ արձանագրում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

– Չորս գյուղի համայնքապետ ես ուզում դառնալ, ծանո՞թ ես մնացածների խնդիրներին:

– Գիտեմ, ծանոթ եմ: Բոլոր գյուղերն էլ խնդիրների հաշվով համարյա նույն բովանդակությունն ունեն. խմելու եւ ոռոգման ջրի հարց, գյուղատնտեսական մթերքների իրացում, փողոցների գիշերային լուսավորություն, ներգյուղական անբարեկարգ փողոցներ, դժվարություններ՝ ձմռանը փողոցները մաքրելու գործում, իսկ Սպանդարյանի դպրոցի վիճակը խիստ մտահոգիչ է: Ամռանը Գորայքից 45 երեխա հանգստանում է ճամբարներում: Մյուս գյուղերի երեխաներին այդ հնարավորությունն ընձեռված չէ: Այդ երեխաները մեղք ունե՞ն, որ Գորայքում չեն ծնվել:

ՏԻՄ առաջիկա ընտրություններում Առուստամ Առուստամյանի մրցակիցը նրա ամենամոտ, ամենամտերիմ ընկերներից մեկն է՝ Մանուչարը: Ակամայից հիշում եմ Հովհաննես Թումանյանի «Անուշ» պոեմը, թե ինչպես այնքան մոտ ընկերները՝ Սարոն եւ Անուշի եղբայրը՝ Մոսին, դարձան թշնամիներ: Պատճառն Անուշն էր: Սարոն, մոռանալով ադաթները, գետնեց Մոսուն...

Այս պարագայում աղջկա եւ ադաթի հարց չկա. այստեղ իրար «գետնելու» են համայնքապետի աթոռի համար: Արդյո՞ք, թշնամի կդառնան հին ու մտերիմ ընկերները, որ տարիներ շարունակ իրար հետ հաց են կիսել, լավ ու վատ օրերի իրար կողք կանգնել:

– Մանուչարը հոյակապ անձնավորություն է, հոյակապ աշխատող: Ես նրա հետ եմ աշխատելու: Եթե ժողովուրդն ինձ ընտրեց, ես դա հաղթանակ չեմ համարի, չէ՞ որ մրցակիցս իմ լավ ընկերն է: Ուղղակի կասեմ՝ ընտրվել եմ եւ ոչ թե հաղթել: Թող ժողովուրդը ճիշտ ընտրություն կատարի, որ հետո չասի՝ էս իշխանությունը վատն է, էս իշխանությունը...

– Ընտրվելու շանսեր ունե՞ս:

– Եթե չունենայի, մրցասպարեզ չէի մտնի: Ժողովրդի լեզուն լավ հասկանում եմ, մարդկանց երբեք սեփական հոգսերի հետ մենակ չեմ թողել ու չեմ թողնի: Ամեն մի մարդ մեր երկրի հարստությունն է: Ահա ինչու ասում եմ՝ սիրելի ժողովուրդ, ճիշտ ընտրություն կատարեք: Ես ժողովրդին ցանկանում եմ առողջություն, երկրին՝ խաղաղություն եւ բարգավաճում, սահմանին կանգնած զինվորին՝ անպարտելիություն, մեզ էլ՝ ուժ ու եռանդ:

Ծանր է կրել չորս գյուղ ընդգրկող համայնքի ղեկավարի գլխարկը: Առուստամը դա գիտակցում է եւ գիտակցաբար առաջադրվել է համայնքապետի թեկնածու: Առաջադրվել է, որ բնակավայրերն ամրանան-զորանան, որ բնակավայրերը ներսից մեծանան-հզորանան՝ սեփական ուժին ապավինած: Չէ՞ որ մարդ գետնից բարձրանալիս սկզբում իր ծնկանն է հենվում: Առուստամ Առուստամյանն առաջադրվել է, որ բնակավայրերը զարգացման այն աստիճանն ունենան, որ նրանք իրենց ծնկանը հենված, առանց որեւէ մեկի օգնության, դառնան պատվար՝ հայոց պետականության զարգացման համար, դառնան արժանապատիվ մասնակից՝ հայոց աշխարհի ճակատագիրը դարբնելու գործում:

ԱԼՎԱՐԴ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Հայտնի են ՀՀ նախագահի մրցանակի համար պայքարող հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկները

Մրցույթի փակման հանդիսավոր արարողությանը ներկա են գտնվել ՀՀ սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Գաբրիել Ղազարյանը, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը եւ ՀՀ Կոտայքի մարզպետ Կարապետ Գուլոյանը, ովքեր պարգեւատրել են հաղթողներին ու մրցանակակիրներին:

Նախարար Ղազարյանը ողջունել է մասնակիցներին, շնորհավորել մրցումներին հաջող մասնակցելու համար եւ շնորհակալություն հայտնել մարզիկներին ֆիզկուլտուրայով եւ սպորտով ակտիվորեն զբաղվելու համար: **«Հարգելի՛ մարզիկներ, դուք հասարակության լիիրավ անդամներ եք, մշտապես հիշե՛ք այդ մասին: Հիշեք նաեւ, որ հաշմանդամություն ունեցող անձանց վերաբերող բոլոր խնդիրները ՀՀ նախագահի եւ ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում են, եւ համատեղ ուժերով մենք կարող ենք հաղթահարել ցանկացած դժվարություն»**, – ասել է Գ.Ղազարյանը:

Ներկաներին ողջունել եւ հետագա հաջողություններ է մաղթել նաեւ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը:

Մրցումների հաղթողները եւ մրցանակակիրներն արժանացել են ՀՀ նախագահի դրամական մրցանակներին եւ գավաթներին: Բոլոր անհատական մրցաձեւերում 1-ին տեղը զբաղեցրած մարզիկները պարգեւատրվել են 150 000-ական, 2-րդ տեղը զբաղեցրածները՝ 140 000-ական եւ 3-րդ տեղը զբաղեցրածները՝ 130 000-ական ՀՀ դրամով: Մրցումների միակ խաղային մրցաձեւի՝ բասկետբոլի մրցումներում 1-ին տեղը զբաղեցրած թիմի բոլոր անդամները պարգեւատրվել են 130 000-ական ՀՀ դրամով, 2-րդ տեղը՝ 120 000-ական եւ 3-րդ տեղը՝ 110 000-ական ՀՀ դրամով:

Թիմային հաշվարկով հաղթող է ճանաչվել Լոռու մարզի թիմը, 2-րդ եւ 3-րդ տեղերը համապատասխանաբար զբաղեցրել են ՀՀ Սյունիքի մարզի եւ Երեւան քաղաքի թիմերը, որոնք արժանացել են հատուկ գավաթների:

Միջոցառման ավարտին նախարարներ Ղազարյանը եւ Ասատրյանը 12 մարզիկի հանձնել են մարզումների համար նախատեսված հատուկ անվասայլակներ:

Հիշեցնենք, որ մրցաշարը մեկնարկել է օգոստոսի 28-ին, որին մասնակցել են ՀՀ մարզերի եւ Երեւան քաղաքի լսողական, տեսողական, հենաշարժողական խնդիրներ եւ մտավոր սահմանափակումներ ունեցող մարզիկներ եւ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ: Մարզիկները մրցել են շախմատ, սեղանի թենիս, դարթս, բազկամարտ, շաշկի, եռամարտ եւ բասկետբոլ մարզաձեւերում:

31 օգոստոս 2016
msy.am

Հանրակրթական դպրոցների ուսուցիչների օգոստոսյան ավանդական խորհրդակցությունը

Օգոստոսի 26-ին Կապանի մշակույթի կենտրոնի մեծ դահլիճում տեղի ունեցավ մարզի հանրակրթական դպրոցների եւ ուսուցիչների օգոստոսյան ավանդական խորհրդակցությունը, որ ներածական խոսքով բացեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը: Մարզի կրթական համակարգի 2015-16 ուստարում հանրակրթության ոլորտում կատարվածի, առկա խնդիրների եւ նոր ուստարում անելիքների մասին զեկուցումով հանդես եկավ մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ Հովիկ Ալեքսանյանը:

Իրենց ղեկավարած կրթօջախներում արված եւ անելիք աշխատանքների մասին ելույթ ունեցան Գորիսի պետական համալսարանի ռեկտոր, ֆիզմաթ գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտուշ Ղուկասյանը, Խնձորեսկի Գարեգին Սեւունցի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Վալենտինա Բալայանը, Կապանի Անդրանիկ Մարգարյանի անվան թիվ 7 հիմնական դպրոցի տնօրեն Կարինե Հովսեփյանը, Քաջարանի արհեստագործական պետական ուսումնարանի տնօրեն Արամայիս Առաքելյանը, Լեհվազի միջնակարգ դպրոցի տնօրեն Վարսենիկ Վարդանյանը:

Զեկուցման մեջ եւ ելույթներում հնչեցրած հարցի շուրջ իր նկատառումները հայտնեց հանրապետության կրթության եւ գիտության նախարարության կրթության պետական տեսչության պետ Արամ Կարապետյանը:

Մարզի կրթության ոլորտի մի խումբ անձինք պարգեւատրվեցին մարզպետի շնորհակալագրով:

Խորհրդակցության արդյունքներն ամփոփեց Սյունիքի մարզպետ Սուրեն Խաչատրյանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

Բնապահպանական շաբաթօրյակներն ավանդույթ կդառնան

Կապանի լեռնահարստացման կոմբինատում օգոստոսի 22-ից 29-ն անցկացվել է բնապահպանական շաբաթօրյակ, որին մասնակցել է ձեռնարկության 13 ստորաբաժանում:

Սեպտեմբերի 5-ին կոմբինատում տեղի ունեցավ շաբաթօրյակի շրջանակում անցկացված միջոցառումների արդյունքների ամփոփում: Կոմբինատի նյութատեխնիկական մատակարարման գծով գլխավոր տնօրենի տեղակալ Մաքսիմ Կարմալիցինն ամփոփմանը նվիրված բացման խոսքում նշեց, որ «Պոլիմետալ» ընկերությունում գործում է բնապահպանական կառավարման համակարգ: Այն շուտով ներդրվելու է Կապանի լեռնահարստացման կոմբինատում եւ միտված է շրջակա միջավայրի մաքրության պահպանման բարելավմանը եւ աշխատանքի անվտանգության առումով ձեռնարկության աշխատակիցների պատասխանատվության զգացումի բարձրացմանը: «Պոլիմետալ» ընկերության ձեռնարկություններում պարբերաբար անցկացվում են բնապահպանական միջոցառումներ՝ աշխատակիցների եւ բնակչության մասնակցությամբ, մասնավորապես շաբաթօրյակներ, ծառատունկեր, բնապահպանական մրցույթներ, վիկտորինաներ, այլ միջոցառումներ: Մ.Կարմալիցինը երախտագիտություն հայտնեց կոմբինատի աշխատակիցներին շաբաթօրյակին ակտիվորեն մասնակցելու համար եւ համոզմունք հայտնեց, որ բնապահպանական շաբաթօրյակներն ավանդույթ կդառնան:

Ձեռնարկության բարեկարգմանը եւ սանմաքրման աշխատանքներին լավագույնս մասնակցության համար պատվոգիր եւ տոնական տորթ հանձնվեց հարստացուցիչ ֆաբրիկայի կոլեկտիվին, հաջորդ տեղերը գրավեցին կոմբինատի աշխատանքի պաշտպանության եւ արտադրական անվտանգության բաժինը եւ կոմպրեսորային ու օդափոխության տեղամասը: Մրցույթի արդյունքներով լավագույն աշխատակիցներ են ճանաչվել փականագործ Նորիկ Վարդանյանը, ստորգետնյա աշխատանքի օգնական-բանվոր Միհեր Գեւորգյանը, էներգամեխանիկական ծառայության էլփականագործ Հրայր Թումանյանը, ովքեր պատվոգիր եւ հուշանվեր ստացան:

«Մանկական ամառային ճամբար-2016»-ի մասնակից երեխաների շրջանում Կապանի լեռնահարստացման կոմբինատի կողմից հայտարարվել էր մրցույթ՝ «Մաքուր պահենք բնությունը» խորագրով, որին ներկայացվեց 46 աշխատանք:

Լավագույնը ճանաչված չորս աշխատանքի հեղինակները խրախուսվեցին:

«Մենք առաջին անգամ ենք ձեռնարկությունում անցկացնում նման շաբաթօրյակ եւ հաճույքով կկազմակերպենք հաջորդ տարիներին եւս: Նման միջոցառումները «Պոլիմետալ» ընկերության բնապահպանական համակարգի կառավարման մաս են կազմում, որում մենք սկսում ենք ներգրավվել: Յուրաքանչյուր աշխատակից ձեռնարկության հետ հավասար պատասխանատվություն է կրում աշխատավայրում եւ շրջակա միջավայրի համար առհասարակ, ինչպես նաեւ այն տարածքի, որտեղ բնակվում եւ աշխատում է», – միջոցառման ավարտին ասել է Կապանի լեռնահարստացման կոմբինատի բնապահպանական բաժնի ղեկավար Տարոն Նավասարդյանը:

ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Ստացվեց այնպես, որ հետագա բուժօգնությունս ստացա ՀՀ ոստիկանության բուժվարչության հոսպիտալում: Մրսածության հետեւանքով շնչարգելությունն էր ինձ նեղություն տալիս, բայց այնտեղ ինձ պետպատվերի շրջանակում համակողմանի բուժզննման ենթարկեցին: Կասեի, որ այդ առողջապահական հաստատությունում առնչվեցի մարդկային ջերմ վերաբերմունքի, ինչպես նաեւ հոսպիտալի բուժանձնակազմի բարձր պրոֆեսիոնալիզմին, ինչի համար խորին երախտագիտություն եմ հայտնում հոսպիտալի թերապեւտիկ բաժանմունքի վարիչ Մարինա Միրզոյանին, բժիշկ-թերապեւտ Գայանե Քյուրքչյանին (բուժող բժշկին), բաժանմունքի բուժքույրերին՝ հանձինս Մարգարիտայի, Սյուզաննայի, Լաուրայի, մյուսների, սանիտարուհիների, ճաշարանի աշխատակցուհի Աննայի, ինչպես նաեւ Կապանի Շահումյան փողոցի ընտանեկան բժիշկ Ռուզաննա Փարսադանյանին՝ ճշգրիտ ախտորոշման համար:

Ձեզ՝ արեւշատություն եւ ամենայն բարիք:

ՌՈՄԱ ՍՏԵՓԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Կապան քաղաքի բնակիչ, ոստիկանության նախկին աշխատակից

Տաթեւի վանական համալիրում գրեթե չորս դասնամյակ տեւած վերականգնման աշխատանքների ամփոփում

Տաթեւի վանական համալիրի հանդեպ մանավանդ վերջին տարիներին զբոսաշրջության զարգացման հետ կապված հետաքրքրությունը բավականին մեծացել է: Բայց մինչ ներկայիս տեսքին հասնելը համալիրը 1931թ. երկրաշարժից վերածվել էր փլատակների: Հատկապես 1980-ական թվականներից համալիրում լայն թափ ստացած վերականգնողական աշխատանքների ճարտարապետներից Ամիրան Բադիշյանից տեղեկացանք տասնամյակներ տեւած աշխատանքների մասին:

«Ռեստավրացիան սկսվում է այնտեղ, որտեղ նյութ կա եւ վերջանում այնտեղ, որտեղ վերջանում է նյութը: Բուն ռեստավրացիան ենթադրում է նյութական հավաստի էլեմենտներով նախկին տեսքի վերականգնում: Եթե հուշարձանն ունենում է դարաշրջանային մի քանի շերտ, եւ այդ շերտերից պահպանվել են հավաստի նյութեր, արժեքներ, ռեստավրացիայի օրենքով նախապատվությունը տրվում է ամենակարեւոր շերտին: Օրինակ՝ կան 7-րդ եւ 17-րդ դարերի շերտեր, եւ փլուզում է տեղի ունեցել ու պիտի կատարել ընտրություն, ապա առաջնությունը տրվում է 7-րդ դարի շերտին, եթե, իհարկե, նյութական պահպանվածությունը գերակշռում է», – այսպես բնութագրեց Տաթեւի վանական համալիրում շուրջ 35 տարի վերականգնման համար հետազոտական եւ նախագծային աշխատանքներ կատարող ճարտարապետական խմբի անդամ Ամիրան Բադիշյանը:

Պատմական միջավայրը Տաթեւի վանքում վերականգնվել է (առայժմ ոչ ամբողջական) վանքի գործունեության վերջին ժամանակաշրջանի՝ 20-րդ դարասկզբի տեսքով: Ա.Բադիշյանի տեղեկացմամբ՝ Խրիմյան Հայրիկի վեհափառության տարիներին գավիթը՝ Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու արեւմտյան ճակատին կից, 14-րդ դարում Հովհան Որոտնեցու կառուցած զանգակատունը եւ սյունասրահի մեծ մասը քանդվում են (որոնցով համալիրը երկու բակի էր բաժանվում), եւ Պողոս-Պետրոս եկեղեցու մուտքի դիմաց կառուցվում է այսօրվա զանգակատունը: *«1906թ. մենք ունեինք այդ միջավայրը, որ այսօր, որոշակի անավարտություններով հանդերձ, վերականգնվել է: Ի դեպ, մեզ այդ հարցում բավականաչափ օգնել են այդ շրջանում կատարված լուսանկարները»,* – նշեց ճարտարապետը: Տաթեւի վանական համալիրը դարերի ընթացքում անընդհատ կառուցվածքային փոփոխությունների է ենթարկվել՝ կախված հոգեւոր եւ կրթական գործունեության ընդլայնման, ինչպես նաեւ պաշտպանական նկատառումներից: Մինչեւ 19-րդ դարի վերջերը վանքի բակը բաժանված էր երկու մասի՝ հոգեւորական մաս՝ վեհարան, սեղանատուն, եկեղեցի՝ գավթով ու սրահով, հյուսիսային հատվածում՝ օժանդակ մասը: Չնայած ձիթհանը պատկանում էր վանքին, սակայն որպես արտադրական կառույց, հաշվի առնելով կատարվող աշխատանքների ընթացքում առաջացող անհարմարությունները, այն միտումնավոր վանքի տարածքից դուրս են կառուցել:

1980թ. աշնանը հուշարձանների պահպանության վարչությունում աշխատանքային ուղեգրեր ստանալով՝ ճարտարապետներ Ամիրան Բադիշյանը, Սամվել Այվազյանը, Գեւորգ Ավետիսյանը գործուղվեցին Տաթեւի վանք, որ մասամբ փլատակների տակ էր, մասամբ՝ մաքրված: 1968-70թթ. Գրիգոր Աղաբաբյանի նախաձեռնությամբ եւ ղեկավարությամբ մաքրման աշխատանքներ էին կատարվել, եւ նրա նախագծով համարյա ավարտին էին հասցվել Սուրբ Աստվածածին եկեղեցու վերականգնման աշխատանքները: Հետագայում վերականգնող ճարտարապետների խումբը համալրվեց տարբեր մասնագետներով, եւ փուլ առ փուլ կատարվեցին չափագրական, հետազոտական եւ վերականգնման նախագծային աշխատանքները:

1988թ., երբ արդեն ավարտվել էին գլխավոր հուշարձանախմբի էսքիզային նախագծային աշխատանքները, ճարտարապետական խումբն այն ներկայացրեց Մոսկվայում անցկացվող տարվա լավագույն վերականգնման նախագծերի համամիութենական ստուգատեսին, որտեղ նախագիծը բուռն քննարկումների առիթ տվեց: Առանձնակի ուշադրության արժանացավ զանգակատան վերականգնման նախագիծը. շուրջ 1200 նախշազարդ դետալներով զանգակատան



Ամիրան ԲԱԴԻՇՅԱՆ

հավաստի վերականգնում՝ ռեստավրացիայի բոլոր օրենքներին համաձայն: ԽՍՀՄ տարբեր երկրների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովը սա համարեց բացառիկ երեւույթ, ի վերջո նախագիծն արժանացավ առաջին կարգի դիպլոմի: *«Սա, իհարկե, ԽՍՀՄ ռեստավրացիայի բնագավառում առանձնահատուկ էր, հետեւաբար նաեւ պատվաբեր եւ՛ վարչության, եւ՛ Հայաստանի համար»,* – նշեց վերականգնող ճարտարապետ Ամիրան Բադիշյանը եւ հավելեց, որ նախագծային աշխատանքներին զուգահեռ 1981թ.-ից սկսվեց նախագծերի իրականացումը, եւ առաջինը եղավ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վերականգնումը, որն ավարտին հասցվեց 1983-84թթ.:

Ա.Բադիշյանի տեղեկացմամբ՝ վերականգնողական աշխատանքների ընթացքում պարբերաբար, որոշակի սահմանված ժամանակացույցով, կատարվում էր նաեւ հեղինակային վերահսկողություն, բայց խորհրդային տարիներին ճարտարապետ-հեղինակը շինարարի վրա ներազդելու բավականաչափ լծակներ չուներ, որն իր բացասական հետեւանքները թողեց ոչ միայն Տաթեւի վանքում, այլեւ այդ տարիների ողջ ռեստավրացիայի բնագավառում: Որոշակի բացասական ազդեցություն ունեցան նաեւ մայրաքաղաքից բավականաչափ հեռու գտնվելը, տրանսպորտային միջոցների սղությունը:

Վերականգնողական աշխատանքները շարունակվեցին մինչեւ 1992թ.՝ ԽՍՀՄ փլուզումը, որին հաջորդեց նաեւ հուշարձանների պահպանության համակարգի կազմալուծումը: Այդ տարիների ընթացքում ահռելի աշխատանք կատարվեց, այն, ինչ հիմա տեսնում ենք Տաթեւի վանքում: *«Իր թերություններով, բացթողումներով հանդերձ՝ այսօր ունենք դեռեւս անավարտ, սակայն համեմատաբար կանգուն, ներկայանալի վիճակ»,* – նշեց Ամիրան Բադիշյանը:

1988թ. ազգային-ազատագրական շարժման, ազգային վերածննդի գաղափարների ֆոնի վրա մասսայաբար պետության հոգածության տակ գտնվող մի շարք համալիրներ եւ առանձին եկեղեցիներ պաշտոնապես հանձնվեցին Մայր աթոռի տնօրինությանը՝ որպես սեփականություն: Մայր աթոռի միջոցներով 1992-1999թթ.. շարվեցին Սուրբ Պողոս-Պետրոս եկեղեցու ներսի սալահատակը (դժբախտաբար եկեղեցու ներքին տարածությանը ոչ համահունչ), լանջերի ծածկասալերը, որոնք մինչ այդ բաց էին, զանգակատան առաջին հարկաբաժնի ներսի ստալակտիտավոր գմբեթային ծածկն ու արտաքին քիվաշարը: Նախագծի հեղինակը նույն ճարտարապետական խմբից էր, անմիջական մասնակցություն ունեցավ նաեւ զանգակատան հիշյալ՝ վերջին շինարարական աշխատանքներին: Ամիրան Բադիշյանի խոսքերով՝ սա կարծես թե եղավ Տաթեւի վանքի վերականգնողական էպոպեայի ավարտը:

Հետխորհրդային տարիներին Հայաստանի սոցիալ-տնտեսական, ֆինանսական վիճակից ելնելով՝ հետին պլան մղվեց հուշարձանների վերականգնման գործընթացը: Համակարգում կատարվեցին կառուցվածքային փոփոխություններ, բնագավառը մտցվեց մշակույթի նախարարության կազմի մեջ: *«Բայց մի բան ակնհայտ է՝ տնտեսական գործընթացներին զուգահեռ հուշարձանների վերականգնման գործընթացը գրեթե դադարեցվեց ու հետընթաց ապրեց: Պետության տրամադրած չնչին նյութական միջոցներով անհնար է ծավալուն աշխատանքներ կատարել տասնյակ հազարների հասնող, հոգածության կարիք ունեցող հուշարձանների վերականգնման կամ պահպանման համար, որը, բնականաբար, իր բացասական հետեւանքներն է ունենում»,* – իր մտահոգությունն է հայտնում վերականգնող ճարտարապետը:

Բայց 2008թ. մեկնարկած «Տաթեւի վերածնունդ» ծրագրով, որ ֆինանսավորվում է գործարար եւ բարերար Ռուբեն Վարդանյանի հիմնած հիմնադրամի կողմից, Տաթեւի վերականգնողական աշխատանքների համար նոր շրջան բացվեց: Բացի ճոպանուղու կառուցումից, Տաթեւը զբոսաշրջության կենտրոն դարձնելուց՝ այս ծրագրով նախատեսվում է Սբ Պողոս-Պետրոս եկեղեցու, Գրիգոր Տաթեւացու դամբարանի, Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու, ճոճվող սյան, Սբ Աստվածածին եկեղեցու, ձիթհանի, վանական խցերի, ընդհանուր օգտագործման տարածքների վերականգնում, բարեկարգում եւ այլն: Հիմնադրամի հետ ճարտարապետական խումբը սկսեց արդյունավետ բանակցություններ, որոնց շնորհիվ կատարվեցին ամբողջ համալիրի հուշարձանների վիճակի հետազոտություններ, ֆոտոփաստագրումներ, կազմվեց վերականգնողական աշխատանքների ծրագրային ամբողջական փաթեթ, որ ներառեց ոչ միայն Տաթեւի վանքը, այլեւ շրջակա տարածքի հուշարձանները:

Առաջին աշխատանքը, որ կատարվեց հիմնադրամի ֆինանսավորմամբ, զանգակատան առաջին հարկաբաժնի ժամանակավոր թիթեղյա տանիքի կառուցումն էր, որով այն փրկվեց հետագա քայքայումից: *«Գմբեթային թաղի եւ քիվերի միջեւ պարագծով առաջացել էր ջրահավաք ակոս, որտեղ հավաքված մթնոլորտային ջրերը ներծծվում էին ամբողջ զանգվածի մեջ: Կատարված աշխատանքը նաեւ փոխադարձ վստահության երաշխիք էր, որով եւ համագործակցությունը հիմնադրամի հետ դրվեց գործնական հիմքերի վրա»,* – պարզաբանեց Ամիրան Բադիշյանը: Այնուհետեւ կատարվեց ճոպանուղու կառուցման համար հատկացված տարածքի հետազոտություն, որը ցույց տվեց, որ այդտեղ նախկինում գերեզմանատուն է եղել: *«Համապատասխան հիմնավորումով առաջարկեցի ճոպանուղու «Տաթեւ» կայանը տեղափոխել, քանի որ այն գերեզմանատան վրա չէր կարող կառուցվել (բացի դրանից՝ տարածքը սողանքային գոտի էր): Եվ կայանը կառուցվեց 20-25մ դեպի արեւմուտք՝ տապանադաշտից դուրս»,* – նշեց ճարտարապետը:

Ամիրան Բադիշյանի տեղեկացմամբ՝ նա առաջարկեց ճոպանուղու կառուցմանը զուգահեռ կատարել որեւէ ռեստավրացիոն աշխատանք՝ ցույց տալու հանրությանը եւ մասնագիտական շրջանակներին, որ հիմնադրամը, համագործակցելով հեղինակ-ճարտարապետների հետ, կարող է նաեւ հաջողված ռեստավրացիոն աշխատանքներ կատարել:

Ա.Բադիշյանի առաջարկով 2010թ. ծրագրվեց, եւ սկսվեցին ձիթհանի փլատակների մաքրման ու վերականգնողական աշխատանքները: Նախագիծը մշակեց նախկին ճարտարապետական խումբը (Ա.Բադիշյան, Ս.Այվազյան, Ս.Հայոցյան), որը ներկայացվեց մշակույթի նախարարության գիտամեթոդական խորհրդի քննարկմանը եւ արժանացավ բարձր գնահատականի:

«Մինչեւ 2010թ. դադարի շրջան էր, եւ երազանք էր մեծ ծավալով ռեստավրացիոն աշխատանքներ կատարելու ավանդույթը վերականգնելը: Մասնագիտական շրջանում կարոտի ու ափսոսանքի զգացում կար, եւ ձիթհանի նախագիծը «պոռթկում» առաջացրեց: Կառույցի վերականգնումից հետո անձամբ եմ վերականգնել ձիթհանի արտադրական մեխանիզմի կոնստրուկցիաները: Այդ փուլում ընտրվեց ձիթհանը, որովհետեւ այն վանքի տարածքից դուրս էր, եւ նրա վերականգնման գործընթացը չէր խանգարում վանական կյանքին, տուրիզմին, ինչպես նաեւ զուգահեռ ընթացող ճոպանուղու բացման արարողության կազմակերպման աշխատանքներին», - տեղեկացրեց նախագծի հեղինակ Ա.Բադիշյանը եւ հավելեց, որ մինչեւ 19-րդ դար Հայաստանը ձեթի արտադրությամբ տարածաշրջա-

Տաթեւի վանք, 1931թ. երկրաշարժից առաջ

Տաթեւի վանք, 1931թ. երկրաշարժից հետո

նում առաջատար երկրներից է եղել՝ ցավով նշելով, որ այժմ մենք հիմնականում օգտագործում ենք այլ երկրներում արտադրված ձեթ:

2011թ. կրկին աշխատանքային դադարի շրջան էր, եւ 2012թ. վերսկսվեցին բանակցությունները հիմնադրամի հետ, եւ կատարվեցին հետազոտական աշխատանքներ՝ կառույց առ կառույց, որից հետո պիտի կատարվեին փլատակների մաքրման, կոնսերվացման, մասնակի կամ ամբողջական վերականգնողական եւ այլ աշխատանքներ: Հարակից ներկայացվեց նաեւ, թե որ տարածքում պիտի կատարվեն ինժեներական եւ երկրաբանական հետազոտություններ: 2012-13թթ. ծրագիրն ամբողջական տեսքի բերվեց, եւ զուգահեռ կազմվեցին նաեւ երկու փոքր հուշարձանների վերականգնման նախագծերը՝ Գրիգոր Տաթեւացու դամբարան, ձիթհանից հյուսիս գտնվող 5-7-րդ դարեր թվագրվող հուշակոթող (հետաքրքիր այս կոթողային հուշարձանը վանքի տարածքի պահպանված ամենահին կառույցն է):

Թե՛ խորհրդային տարիներին (1987թ.), թե՛ 2012-13թթ. առանձնահատուկ ուսումնասիրվեց ճոճվող գավազանը: Ամիրան Բադիշյանի հավաստմամբ՝ իրենց հաջողվել է պարզել կառուցվածքի ավելի ստույգ տվյալներ, քան նախորդ հետազոտողները: *«Գավազանի ճոճվելու հատկությունը բազում հարցեր ու տեսակետներ էր առաջացրել, բայց 1987թ. մենք պարզեցինք ճոճվելու մեխանիզմի ստույգ բնույթը, միայն մնում էր որոշակի դետալներ ճշտել, որ առանց քարերը տեղաշարժելու հնարավոր չէ: Մեզ համար առաջնայինը գավազանի ճոճման բնույթն ու մեխանիզմի կառուցվածքը ճշտելն էր, ձեւն արդեն երկրորդական է: 2013թ. կատարվեցին ճոճվող սյան չափագրումներ, եւ սկսվեցին նախագծային աշխատանքները, սակայն այդ ընթացքում Ազգային մրցունակության հիմնադրամի (որը այդ աշխատանքների կոորդինացնող էր) որոշ աշխատակիցների եւ հեղինակային խմբի միջեւ առաջացան տարաձայնություններ, եւ աշխատանքներն այլ՝ վանքի վերականգնման տասնամյակների գործընթացների հետ ընդհանրապես կապ չունեցող ճարտարապետի հանձնելու անսպասելի եւ ոչ արդարացի որոշում կայացվեց»,* – տեղեկացրեց Ա.Բադիշյանը:

Տաթեւի վանական համալիրի վերականգնման աշխատանքներին զուգահեռ Տաթեւ գյուղում նույն ճարտարապետական խմբի նախագծերով վերականգնվել են 17-18-րդ դարերի կամարակապ աղբյուրը, որը, կարծես, վանքում գտնվող աղբյուրի կրկնօրինակը լինի, եւ գյուղամիջի Սուրբ Մինաս եկեղեցին, որը ճարտարապետական տեսանկյունից ուշ միջնադարյան ամենահետաքրքիր, կատարյալ կառույցներից է: *«Եկեղեցու վերականգնումը ԽՍՀՄ փլուզման հետեւանքով կիսատ էր մնացել եւ ավարտին է հասցվել 1995-97թթ. «Երկիր եւ մշակույթ» կազմակերպության ֆինանսավորման շնորհիվ»,* – նշեց Ա.Բադիշյանը:

«Տաթեւի վերածնունդ» ծրագրի հեռահար նպատակներից է նաեւ Տաթեւի ամբողջ շրջակայքի պատմամշակութային հուշարձանների վերականգնումը, իսկ այդպիսիք այստեղ բազմաթիվ են: Ա.Բադիշյանի տեղեկացմամբ՝ հարակից տարածքի հուշարձանների վերականգնման համար նույնպես կազմվել էր ծրագրային փաթեթ: Բայց, այնուամենայնիվ, ցավալի է տարիների կատարած աշխատանքը վերջնական ավարտին չհասցնելը. չէ՞ որ 35 տարին բավականին ժամանակ է այդ տարածաշրջանի ուղնուծուծն ուսումնասիրելու եւ տիրապետելու համար, որի արդյունքում կային բազում նվիրական երազանքներ, փաստագրումներ, նշումներ...

Նախկին «Հայռեստավրացիա» նախագծային ինստիտուտի ճարտարապետներն արդեն 5-րդ տարին է՝ ստեղծել են «Պատմական հուշարձանները վերականգնող ճարտարապետների հայկական ասոցիացիա» հկ, որ ՀՀ մշակույթի նախարարության հետ ստորագրել է փոխըմբռնման հուշագիր, որով կողմերն արտահայտել են իրենց պատրաստակամությունը համագործակցելու հուշարձանների վերականգնման բնագավառում, մասնավորապես՝ հուշարձանների գլխավոր ճարտարապետների ինստիտուտի ստեղծման, հուշարձանների վերականգնման գիտանախագծային, գիտաարտադրական աշխատանքների իրականացման, վերականգնման ընթացքում գտնվող հուշարձանների վերականգնման որակի վերահսկողության, մոնիթորինգի, ինչպես նաեւ բնագավառի մասնագետների վերապատրաստման ու բնագավառի օրենսդրության կատարելագործմանն ուղղված ծրագրերի ուղղությամբ:

Օգտվելով առիթից՝ երկարամյա ճարտարապետի հետ զրուցեցինք ռեստավրացիայի բնագավառում այսօր ստեղծված իրավիճակի մասին: Խոսելով խորհրդային տարիներին հեղինակ-ճարտարապետների իրավասություններից՝ Ա.Բադիշյանը նշեց, որ այն տարիներին երբեմն ճարտարապետների հիմնական խնդիրը պայքարն էր նախագծային լուծումների աղավաղման ու թերություններով վերարտադրման դեմ, որը բերում էր անհամատեղելիության եւ կոնֆլիկտային իրավիճակի: Այսինքն՝ շինարարն իր աշխատանքն արդեն կատարել էր, եւ կատարվածի վրա հեղինակ-ճարտարապետի ազդեցություն ունենալն իրավասությունից դուրս էր, որից տուժողը հիմնականում հուշարձանն էր: Սա այն տարիների խորհրդային օրենսդրության անկատարության հետեւանքներից էր: *«Երբ 1985թ. հուշարձանների վերականգնման վարչության պետ նշանակվեց Ալեքսան Կիրակոսյանը, ռեստավրացիայի գործընթացը, հօգուտ հուշարձանների, սկսեց ծաղկում ապրել: Նա, ստեղծված իրավիճակից ելնելով, կարգադրեց առանց հեղինակ-ճարտարապետի գիտության որեւէ շինարարական աշխատանք չընդունել: Այս մոտեցումն անմիջապես տվեց իր դրական արդյունքները, որը, սակայն, ընդամենը տեւեց մինչեւ 1988թ., երբ Ղարաբաղյան շարժման ֆոնի վրա Ա.Կիրակոսյանին հրավիրեցին Մոսկվա եւ քաղաքական-ազգային հայացքներից ելնելով՝ հեռացրին աշխատանքից»,* – պատմեց Ա.Բադիշյանը:

Մամուլում հաճախ կարելի է հանդիպել հրապարակումների, որոնցում քննադատվում է ներկայիս ռեստավրացիոն ոլորտը՝ կապված կատարված աշխատանքների որակի ու կիրառված շինանյութերի հետ: «*Այս հարցում ոչ մեկին պետք չէ մեղադրել կամ արդարացնել: Մեղավորության բաժին ունեն ճարտարապետից մինչեւ շինարարություն կատարողն ու ընդունողը: Ինչքան էլ խոսենք խորհրդային տարիներին այս ոլորտի թերություններից, միեւնույնն է, դրանք չնչին են այսօրվա բացթողումների կողքին: Այն տարիներին կառավարությանն առընթեր գործում էր հուշարձանների պահպանության գլխավոր վարչություն, որ ուներ «Հայռեստավրացիա» նախագծային ինստիտուտ՝ իր ենթաբաժիններով: Վարչության կազմն ուներ նաեւ ռեգիոնալ շինարարական արվեստանոցներ, որ իր ենթաբաժիններով հստակ գործող օրգան էր՝ վարչության կողմից կառավարվող: Նախագիծը նախքան աշխատանքայինի վերածվելն էքսիզային փուլում քննարկվում էր տեխնիկական, գիտամեթոդական եւ այլ խորհուրդների կողմից, որոնցում ընդգրկված էին ոլորտի լավագույն մասնագետները: Բայց այսօր բազմազբաղ մշակույթի նախարարությունն է զբաղվում այդ հարցերով, եւ, բնական է, համակարգային կառուցվածքի բացակայությունը խնդիրներ է առաջացնում: Մշակույթի նախարարությունը երգեցողությա՞ն, նկարչությա՞ն, գորգագործությա՞ն, ճարտարապետությա՞ն, թե՞ այլ հարցերով զբաղվի: Ճիշտ է, վերականգնվող հուշարձանը մշակութային արժեք է, բայց այն շինարարական ծանր ու բարդ գործընթացի արդյունք է: Ես դեմ չեմ, որ գործընթացը մշակույթի նախարարության կազմում լինի, բայց ձեւավորվի որպես համապատասխան ենթաբաժիններով առանձին համակարգ՝ ղեկավար օրգանով, որը կկոորդինացնի ամբողջ գործընթացը՝ հետազոտություն-նախագիծ-իրականացում: Այսօրվա՝ ժողովրդական խոսքով ասած աքան-ցաքան վիճակը, գումարած նաեւ այն, որ մեր երկրում ներդրումները, ինչպես հուշարձանների քանակի, այնպես էլ նույնիսկ հարեւան երկրների ներդրումների հետ համեմատած՝ չեղածի հաշիվ է, բնականաբար անդրադառնում է նաեւ որակի վրա»,* – նշեց փորձառու ճարտարապետը: Նա առանձնակի ցավով նշեց նաեւ քարտաշ-վարպետների՝ քանակի օրեցօր պակասող եւ դեպի անհետացում գնացող երեւույթի մասին, որի արդյունքում կարճ ժամանակ անց այլեւս չենք ունենա քարի լեզուն իմացող կամ հասկացող վարպետներ, որը, սակայն, այս բնագավառի կենսունակության ամենակարեւոր պայմաններից մեկն է:

Անկախությունից հետո ՀՀ տարածքում որոշ եկեղեցիներ եւ պատմական այլ հուշարձաններ վերականգնվում են նաեւ բարերարների ներդրումներով: Բավական լայնածավալ աշխատանքներ է կատարել եւ շարունակում է իրականացնել «Երկիր եւ մշակույթ» բարեգործական հասարակական կազմակերպությունը, որի նախաձեռնությամբ, ի թիվս բազմաթիվ աշխատանքների, Բեխի անապատում 3-4 տարի է՝ հետազոտական եւ մաքրման աշխատանքներ են իրականացվում:

Ա.Բադիշյանը թվարկեց նաեւ այն բոլոր աշխատանքները, որոնք տասնամյակների ընթացքում կատարել է իրենց ճարտարապետական խումբը թե՛ մարզում, թե՛ հանրապետության տարբեր վայրերում:

Վերականգնող ճարտարապետը նորագույն շինանյութերով կատարվող ռեստավրացիոն աշխատանքներին դեմ չէ. *«Օրինակ, իտալացիները ստեղծել են շինանյութեր հատուկ ռեստավրացիայի համար, որոնք ոչնչով չեն զիջում բնօրինակ նյութերին: Կրային հիմքի վրա, տարբեր հավելանյութերով պատրաստված շաղախանյութը լուծում է կապակցելիության, ջրամեկուսացման, ամրության խնդիրները: Այսօր ժամանակակից տեխնոլոգիաներով հնարավոր է ստանալ «մայր» շինանյութին լիարժեք փոխարինող, նույնիսկ որոշ առավելություններ ունեցող նյութեր: Պարզապես այդ նյութերը թանկ արժեն եւ մեր երկրի համար առայժմ գրեթե անմատչելի են: Ժամանակակից նյութերի, առաջնակարգ տեխնոլոգիաների ու գործիքների հիմնավորված կիրառումը նորմալ ու հրամայական է. հուշարձանի տեսքը չխաթարենք, բայց պահպանենք եւ ապահով փոխանցենք ապագա սերունդներին»:*

ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԽՈՍՔ ՀԻՇԱՏԱԿԻ

Արշալույս Գալստյան

Կյանքին հրաժեշտ տվեց երկարամյա մանկավարժ Արշալույս Դադաշի Գալստյանը:

Ծնվել է 1925թ. դեկտեմբերի 28-ին Ղափանի շրջանի Կաղնուտ գյուղում, սկզբնական կրթությունը ստացել է գյուղի 7-ամյա, ապա՝ ուսումը շարունակել Արծվանիկի միջնակարգ դպրոցում, որն ավարտել է 1943 թվականին:

Ավարտելուց անմիջապես հետո Կապանի շրջժողկրթբաժինը նրան գործուղում է Կապանի շրջանի Ներքին Հանդ, իսկ մի քանի տարի հետո՝ Սեւաքար՝ դասավանդելու քիմիա եւ կենսաբանություն առարկաները:

1947թ. վաղաժամ մահանում է հայրը՝ Դադաշ Գալստյանը, եւ, լինելով ընտանիքի վեց զավակից ավագը, ամբողջ հոգսն ընկնում է նրա վրա:

1947թ. պատերազմից վերադարձած համագյուղացի Սերբիա Ջահանգիրյանի հետ ընտանիք է կազմում եւ նոր կյանք սկսում:

Ընդունվում է Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժինը, 1956 թվականին ստանում միջնակարգ դպրոցի կենսաբանության, քիմիայի ուսուցչի որակավորում:

1951 թվականին ընտանիքը տեղափոխվում է Ղափան քաղաք, եւ Արշալույս Գալստյանն անդամագրվում է Ղափանի ամենահեղինակավոր մանկավարժական կոլեկտիվին՝ Ղափանի N1 միջնակարգ դպրոցին, որպես քիմիա-կենսաբանության ուսուցչուհի:

1973թ., դեռ 50 տարին չբոլորած, մահանում է ամուսինը՝ Սերբիա Ջահանգիրյանը՝ ընտանիքի ամբողջ հոգսը թողնելով կնոջ վրա: Հիմնական աշխատանքից դուրս նա սկսում է դասավանդել նաեւ Կապանի երեկոյան դպրոցում: Այդ տարիներին նրա երկու աղջիկը՝ Լարիսան եւ Անահիտը, Երեւանի բժշկական ինստիտուտի ուսանողուհիներ էին, իսկ ավագը՝ Միշան, դեռ նոր էր ավարտել բուհը, հարկավոր էր օգնել բոլորին: Իր աշխատանքային գործունեության վերջին 10-12 տարիներն անց է կացրել Կապանի Հունան Ավետիսյանի անվան N9 միջնակարգ դպրոցում: Ընդհանուր առմամբ 37 տարի անմնացորդ նվիրվել է մատաղ սերնդի ուսուցման եւ դաստիարակության նվիրական գործին: Կենսաթոշակի անցնելուց հետո ամբողջությամբ նվիրվեց իր թոռնիկների խնամքին եւ դաստիարակությանը: Ունեցավ ութ թոռ, որոնց եւ՛ կրթության, եւ՛ դաստիարակության գործի անմիջական մասնակիցն է եղել եւ ուղղորդողը:

Նա երջանկություն ունեցավ զբաղվելու նաեւ 13 ծոռան խնամքով:

Վաստակաշատ մանկավարժի, հոգատար մոր եւ բարեհամբույր տատիկի հիշատակը միշտ վառ կմնա հարազատների, բոլոր ճանաչողների սրտերում:

Մի խումբ ընկերներ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գորիսի պետական համալսարանը հայտարարում է մրցույթ օտար լեզուների ամբիոնի վարիչի թափուր պաշտոնատեղի տեղակալման համար: Մրցույթին կարող են մասնակցել գիտական աստիճան եւ/կամ կոչում ունեցող անձինք: Նշյալ պաշտոնին հավակնող թեկնածուի տարիքը չպետք է գերազանցի 65-ը: Անհրաժեշտ փաստաթղթերն են՝

ա) դիմում ԳՊՀ ռեկտորի անունով,
բ) կադրերի հաշվառման անձնական թերթիկ,
գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
դ) ինքնակենսագրություն,
ե) գիտական աստիճանը եւ /կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ հաստատված սահմանված կարգով,
զ) տպագրված գիտական եւ ուսումնամեթոդական աշխատանքների ցուցակը, հաստատված սահմանված կարգով,
է) տվյալներ պարգեւատրումների, մրցանակների եւ պատվավոր կոչումների վերաբերյալ:

Փաստաթղթերի ընդունման վերջին ժամկետն է ս.թ. հոկտեմբերի 1-ը, ժամը 16:00-ն:

Հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Ավանգարդ 4, հեռ.՝ 098196712, 093280904:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Կապանի արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ շեփորի դասախոսի համար:

Փաստաթղթերի ընդունման ժամկետը մինչեւ սեպտեմբերի 27-ն է:

Մրցույթն անցկացվելու է Կապանի արվեստի պետական քոլեջի մասնաշենքում, սեպտեմբերի 28-ին ժամը 11-ին:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ են հետեւյալ փաստաթղթերը՝ անձնագրի պատճենը, դիպլոմի պատճենը, 2 հատ 3x4 լուսանկար:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ (0285)2-48-91 հեռախոսահամարով:

Հասցեն՝ Սյունիքի մարզ, ք.Կապան, Ռ.Մելիքյան 2:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ «ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում է գտնվում թիվ ՍԴ/0156/02/16 քաղաքացիական գործ՝ ըստ Կարինե Վարազդատի Հովսեփյանի ներկայացուցիչ Լիանա Գրիգորյանի դիմումի «Քաղաքացի Վարազդատ Վանիկի Հովսեփյանին անհայտ բացակայող ճանաչելու» պահանջի մասին:

Խնդրվում է բոլոր քաղաքացիներին եւ կազմակերպություններին Վարազդատ Վանիկի Հովսեփյանի (ծնված 09.05.1972 թվական, վերջին հայտնի բնակության վայրը՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Սպանդարյան փողոցի թիվ 1ա շենք, բնակարան 53) վերաբերյալ հայտնի տեղեկությունները տրամադրել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (ք.Մեղրի, Զորավար Անդրանիկի փողոցի թիվ 24/1 հասցեում կամ զանգահարել 0286-4-22-92 հեռախոսահամարով»):

Դատավոր՝ Ժ.Ասատրյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հայտարարվում է մրցույթ՝ Սյունիքի մարզի Գեղանուշի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի (10.25 ժամ), ֆիզկուլտուրայի (13 ժամ) ուսուցչի եւ դասվարի (10 ժամ) թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9:00-ից 14:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 11-ին՝ ժամը 14:00-ին, Գեղանուշի միջն. դպրոցում.

Հասցեն՝ գ. Գեղանուշ, վերին թաղ. 4

Տեղեկությունների համար զանգահարել (0285)2-44-87 եւ 077-76-88-36 հեռախոսահամարներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հայտարարվում է մրցույթ՝ «Աշոտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (15 ժամ) եւ ինֆորմատիկայի (5,25 ժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր, ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Երկու լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի «Աշոտավանի միջնակարգ» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 11-ին՝ ժամը 12:00-ին, «Աշոտավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 098 58 58 48 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Արծվանիկի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մաթեմատիկա առարկայի ուսուցչի թափուր տեղի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /ձեւ 1/,
2. Փաստաթուղթ /դիպլոմ/ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն /ձեւ 4/,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/,
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 2016թ. հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ տոն օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2016թ. հոկտեմբերի 11-ին ժամը 15-00-ին Արծվանիկի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094-90-80-44, 0285-6-03-04:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի N1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի եւ ֆիզիկայի ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /ձեւ 1/
2. Փաստաթուղթ /դիպլոմ/՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն /ձեւ 4/,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/,
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից: Փաստաղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 11-ին ժամը 11:00-ին Կապանի N1 հիմնական դպրոցում, հասցեն՝ Լեռնագործների 16: Տեղեկությունների համար զանգահարել՝ 5-26-26, հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվար /15.5 ժամ/ աշխարհագրության /6.25 ժամ/ եւ ինֆորմատիկա /4.25 ժամ/ առարկաներից ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձև 4)
2. Բարձրագույն կրթության մանկավարժական որակավորման աստիճանը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ), կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն 5 տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքույկից,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են նաեւ զինգրքույկ,

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ 2016 թվականի հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա 2016 թվականի հոկտեմբերի 11-ին ժամը 14:00-ին Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոցում՝ Կավարտ թաղամաս:

Տեղեկությունների համար զանգահարել 2-46-37 հեռախոսահամարներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ նախատեսվում է մարզում ստեղծել տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) եւ ծրագրավորման ուսումնական կենտրոն: Կենտրոնի ստեղծման նպատակն է մարզի երիտասարդներին հնարավորություն տալ մասնագիտանալ տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտում, ծանոթանալ ծրագրավորման հիմունքներին, ինչպես նաև մարզում ստեղծել նոր աշխատատեղեր:

Կենտրոնում նախատեսվում է անցկացնել հետեւյալ դասընթացները.

1. համակարգչային գրագիտություն
2. մուլտիմեդիա
3. վեբ կայքերի նախագծում
4. ծրագրավորում

Նախաձեռնությանը կարող են մասնակցել ինֆորմատիկայի բնագավառում բարձրագույն կրթություն ստացած անձինք, տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի մասնագետներ, ովքեր ցանկանում են աշխատել կենտրոնում ու պատրաստել նոր կադրեր:

Նորաստեղծ կենտրոնի վերաբերյալ մանրամասն տեղեկություն ստանալու համար կարող եք դիմել ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի եւ վերլուծության բաժին կամ զանգահարել (0285) 5-21-30, 094346834 հեռախոսահամարներին կամ գրել syunik.tsragrer@mta.gov.am էլ. հասցեին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Սյունիքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (18 դասաժամ) թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է՝ ըստ դասաբաշխման: Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ձեւ 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ձեւ 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա Սյունիքի մարզի Սյունիքի միջնակարգ դպրոցում, 2016թ. հոկտեմբերի 11-ին: Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 06 48 13, (094) 06 47 81 հեռախոսահամարներով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի N3 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզու եւ գրականություն (36 ժամ), ֆիզիկա (12 ժամ) եւ ռուսերեն (11 ժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է /ձեւ 1/,
2. Փաստաթուղթ /դիպլոմ/՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն /ձեւ 4/,
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հաստատող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները /դրանց առկայության դեպքում/,
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչեւ հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:Փաստաղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա հոկտեմբերի 12-ին, 13-ին եւ 14-ին ժամը 11:00-ին Կապանի N3 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Ա.Մանուկյան 7:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 5-26-39 հեռախոսահամարով:

ՎԱՃԱՌՎՈՒՄ Է 2 սենյականոց բնակարան, 76.35 քմ ընդհանուր մակերեսով: Հասցե՝ ք.Կապան, Մելիք-Ստեփանյան 4, 3-հարկանի շենքի 2-րդ հարկ: Ստալինյան նախագիծ, գազիֆիկացված է, վիճակը՝ բարվոք: Զանգահարել՝ (094) 95 55 35:

ԿՈՐԵԼ Է Կապանի բժշկական ուսումնարանի 1996-97թթ. ուս. տարվա շրջանավարտ Գայանե Գագիկի Աղայանի K 028759 դիպլոմը: Համարել անվավեր:

Միասին՝ հանուն Քաջարանի

Հարցազրույց Քաջարան քաղաքային համայնքի ղեկավարի թեկնածու Մանվել Փարամազյանի հետ

էջ 1

պատրաստ եք, համայնքի ղեկավարի լիազորությունների շրջանակներում, ապահովել այդ համագործակցությունը:

– Անշուշտ:

– Թերթի այս համարում մենք ներկայացնում ենք Ձեր նախընտրական ծրագիրը, որում, բնականաբար, բազում հարցերի պատասխան ենք գտնում: Եվ, այդուհանդերձ, որո՞նք են Քաջարան քաղաքի առջեւ ծառացած հիմնահարցերը:

– Հիմնահարցերը բազմազան ու բազմաբնույթ են, դրանք ես փորձել եմ խմբավորել ըստ ոլորտների:

- Քաղաքի անբարեկարգ ճանապարհներն ու մայթերը, որոնց բարեկարգման գործընթացը «ԶՊՄԿ» ՓԲԸ ղեկավարության աջակցությամբ արդեն սկսվել է:
- Քաղաքի խմելու ջրի խնդիրը. ջրի բնական պաշարներով հարուստ մեր քաղաքի բնակչությունը ապահովված չէ որակյալ խմելու ջրով. ջրամբարների մաքրությունը, ջուրը ֆիլտրող սարքավորումները բարվոք վիճակում չեն գտնվում, խնդիրը հատկապես բարդանում է տեղումների ժամանակ, արդյունքում ունենում ենք ավազախառը պղտոր ջուր:
- Հիմնավոր բարելավման կարիք ունեն զոհված ազատամարտիկների սուրբ գերեզմանները եւ հուշահամալիրը, քանի որ ներկայիս վիճակը չի արտահայտում այն խորը հարգանքն ու երախտագիտությունը, որ մեր համաքաղաքացիները տածում են իրենց կյանքը հանուն հայրենիքի խոնարհած հերոս հայորդիների նկատմամբ:
- Քաղաքն ունի կոմունալ ծառայությունների, աղբահանության հետ կապված լուրջ խնդիր. կեղտոտ բակերը, փողոցները, չդատարկված աղբարկղերը հակասանիտարական վիճակ են ստեղծում քաղաքում, նաեւ ճնշող տպավորություն, հուսահատության զգացում առաջացնում բնակչության մեջ:
- Քաղաքային պուրակների, զբոսայգիների, կանաչապատ տարածքների ստեղծման, բարեկարգման, պահպանման խնդիրը, բնակչության տարբեր տարիքային խմբերի, սոցիալական շերտերի զբաղվածության, ժամանցի կազմակերպման հնարավորության անհրաժեշտությունը:
- Դպրոցահասակ երեխաների ամառային հանգստի եւ ժամանցի կազմակերպման հիմնախնդիրը: Այսօր շատ ծնողներ չունեն ժամանակ եւ միջոցներ՝ կազմակերպելու իրենց երեխաների ամառային հանգիստը: Ի՞նչն էր խոչընդոտում վերագործարկելու «Գանձասար» ճամբարը եւ վերականգնելու երեխաների ճամբարային հանգստի գեղեցիկ ավանդույթը: Հաճելիի եւ օգտակարի այս համադրումը մեծ ջանքեր եւ միջոցներ չի պահանջի քաղաքապետարանից, սակայն մեծ չափով կթեթեւացնի դպրոցահասակ երեխաներ ունեցող ծնողների հոգսն ու մտահոգությունը՝ կապված իրենց երեխաների ամառային հանգստի, ժամանցի, առողջության եւ զբաղվածության հետ:

> *Քաղաքում առկա են բազում այլ մեծ ու մանր խնդիրներ, որոնց լուծումը մեծ ջանքեր չի պահանջում՝ որոշ փողոցների լուսավորությունը, բարձրահարկ շենքերի վերելակները, կանաչապատ տարածքները բիզնես նպատակներով օգտագործումն առանձին անհատների կողմից, քաղաքի բարոյահոգեբանական մթնոլորտը, կյանքի միօրինակությունը, լճացումն ու առօրյա ձանձրույթը:*

– Համաձայն ենք Ձեր նկատառումներին, բայց, եթե կարելի է, մի փոքր ավելի հանգամանալից խոսեք համայնքի բնապահպանական վիճակի եւ դրա բարելավման վերաբերյալ Ձեր պատկերացումների մասին:

– Քաջարանում ապրում են մեր ընտանիքները, մեր մերձավորները, բնականաբար մենք չենք կարող անտարբեր լինել նրանց առողջության ու կյանքի նկատմամբ, բայց իրավիճակի չափազանցությունն ու գույների խտացումը նույնպես ընդունելի չեն. յուրաքանչյուր արդյունաբերական քաղաքում կան բնապահպանական խնդիրներ, սակայն այդ նույն արդյունաբերությունը լուծում է սոցիալ-տնտեսական զարգացման, բնակչության կենսամակարդակի ապահովվածության խնդիրները, այսինքն՝ կշեռքի նժարին դրվում է գործազրկությո՞ւն, աղքատության բարձր ցուցանի՞շ, մաքուր էկոլոգիա՞, թե՞ աշխատանքային ապահովվածություն, բարձր կենսամակարդակ, համեմատաբար խնդրահարույց էկոլոգիա... Այնուամենայնիվ նախընտրական իմ ծրագրում ես ներառել եմ քաղաքի էկոլոգիական վիճակի բարելավման հիմնախնդիրը, մասնավորապես, փողոցների եւ պուրակների կանաչապատում, ծառատունկ, միջշենքային տարածքների կանաչապատում եւ բարեկարգում, մանկական զբոսայգու վերականգնում, ինչպես նաեւ պետության կողմից, միջազգային կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող բնապահպանական ծրագրերի մշակում եւ իրականացում:

– Ըստ մեր ունեցած տեղեկությունների՝ Քաջարան քաղաքում գործում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» բարեգործական հիմնադրամը, որն արդեն իսկ մի քանի լուրջ նախաձեռնությունների հեղինակ է, նաեւ քաղաքի հետ կապված: Մենք ենթադրում ենք, որ այդ հիմնադրամի հետ սերտ համագործակցության անհրաժեշտություն կլինի:

– Այո, «ԶՊՄԿ» բարեգործական հիմնադրամը հանդես է գալիս սոցիալ-տնտեսական, առողջապահական, կրթական, սպորտային ոլորտների հովանավորությամբ ու բարեգործական նախաձեռնություններով, լուծում քաղաքի համար կարեւոր նշանակություն ունեցող բազմաթիվ խնդիրներ:

– 2004թ. տարեվերջին, երբ մասնավորեցվեց «Զանգեզուրի ՊՄԿ» ՓԲ ընկերությունը, ինչ-ինչ խնդիրներ առաջացան ընկերության եւ համայնքային իշխանության միջեւ, նկատի ունենք հատկապես սոցիալական նշանակության օբյեկտների ճակատագիրը: Սկզբից քաղաքապետարանը պայքարում էր դրանք վերցնելու համար, հետո ասացին՝ ոչ, չենք ուզում, որովհետեւ դրանց պահպանությունն արդեն իսկ խնդիր է:

Հետաքրքիր է, հարթվեցի՞ն այդ խնդիրները, թե՞ ոչ: Մի բան գիտենք՝ նախադպրոցական ուսումնական հաստատությունները, մշակույթի կենտրոնը եւ մարզասրահն այսօր լիարժեք գործում են, ինչը շատ կարեւոր է այս պարագայում:

– Հիշատակված կողմերի նախկին փոխհարաբերությունների վերաբերյալ դատողություններ անելն իմ իրավասությունների մեջ չի մտնում, նաեւ անիմաստ եմ համարում: Կարող եմ խոսել ներկայի եւ ապագայի մասին. ներկայումս երկուստեք հակված ենք համագործակցության, ոչ թե երկպառակության, երկու կողմերի համար վարկաբեկող, ջլատիչ պայքարի՝ հանուն գերիշխանության կամ այլ ամբիցիաների: Կարեւոր է, որ նշված օբյեկտները ծառայեն քաղաքին եւ նրա բնակչությանը:

– Մենք քիչ առաջ արծարծեցինք համայնքի բնապահպանական վիճակին առնչվող հարցը: Բայց կա հարց, որ միշտ էլ զարմացրել է:

Տեսեք՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը բնապահպանական հարկերի առումով էլ առաջին տեղերից մեկն է զբաղեցնում, բայց համայնքային իշխանությունը ոչ միշտ է կարողանում համապատասխան ծրագիր մշակել եւ պետության բնապահպանական վճարներից (որպես ազդակիր համայնք) միջոցներ բերել քաղաք: Ինչպե՞ս հասկանալ:

– Արդեն ասացի, որ իմ ծրագրերում այդ դրույթները ներառված են:

– Քաջարանը, ինչպես նշեցինք, ավանդույթներ ունեցող քաղաք է, որոնցից մեկն էլ քաղաքի տոնն է, որ նշվում է ամեն տարի օգոստոսի 21-ին: Հաշվի է առնվել հանգամանքը, որ 1958թ. օգոստոսի 21-ին, Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով, Քաջարանը դասվեց ՀՍՍՌ շրջանային ենթակայության քաղաքների շարքը: Այս տարի այդ տոնը չնշվեց, գոնե հետագայում կվերականգնվի՞ այդ տոնը:

– Իհարկե, մենք մտադիր ենք վերականգնել եւ պահպանել բոլոր գեղեցիկ ավանդույթները:

– Երիտասարդների զբաղվածության, նրանց ազատ ժամանցի, հանգստի, մշակութային եւ մարզական կյանքի աշխուժացման, մի խոսքով, նրանց հարազատ համայնքում պահելու հետ կապված ի՞նչ ծրագրեր ունեք:

– Քաղաքում գործում են «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության մարզադահլիճն ու մշակույթի պալատը՝ անհրաժեշտ բոլոր պայմաններով, սպորտային եւ մշակութային միջոցառումներով: Ոլորտի խնդիրները մշտապես ընկերության ղեկավարության ուշադրության կենտրոնում են, այնուամենայնիվ երիտասարդության հիմնախնդիրները՝ ժամանցի, զբաղվածության, կադրերի աճեցման, աշխատանքի տեղավորման, իմ նախընտրական ծրագրերում հրատապ եւ կարեւորագույն հարցերի շարքում են:

– Ձեր խոսքը Քաջարան քաղաքի ընտրողներին առաջիկա ընտրությունների առիթով:

– Ընտրողներին խնդրում եմ ակտիվ մասնակցել ընտրություններին, դրսեւորել ազատ կամարտահայտում, հավատալ իմ նախընտրական խոստումներին ու ծրագրերին, իրենց վստահության ձայնով հնարավորություն ընձեռել դրանք իրականություն դարձնել, Քաջարանը դարձնել առավել ծաղկուն, ժամանակակից քաղաք: Գործենք միասին՝ հանուն Քաջարանի:

– Ձեզ՝ հաջողություններ, Ձեր ծրագրերին՝ իրականացում:

Հարցազրույցը՝
ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ԱՐՄԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Կրթության ազգային ինստիտուտի հանրակրթության կառավարման եւ բովանդակային նորմատիվների մշակման բաժնի վարիչ

Մանվել Փարամազյանը կառավարչական հետաքրքիր հատկություններ ունի, բավականին պրակտիկ, դիտողունակ եւ նախաձեռնող անձնավորություն է: Մեր հասարակությունում շատ են գաղափարախոսները, որոնց խոսքը հիմնականում գործ չի դառնում: Վստահ եմ՝ Մանվել Փարամազյանի դեպքում հակառակն ավելի լավ է ստացվում, իսկ արդյունքը կչափվի հանրությանը հասանելի եւ տեսանելի աշխատանքներով: Պրագմատիզմի տեսանկյունից բավականին լավ որակներ ունի, որոնք կնպաստեն համայնքի ճիշտ կառավարմանը, իսկ լսելու նրա բացառիկ ունակությունը կնպաստի յուրաքանչյուր հարցի լուծման համար այլընտրանքային ուղիներ փնտրել, նույնիսկ քննադատությունից դասեր քաղել:

Երկար տարիներ է՝ չեմ բնակվում Քաջարանում, բայց այցելությունների ժամանակ համայնքի բարեկարգման տեսանկյունից որոշակի դինամիկան ակնհայտ է: 1996թ. եղել եմ Քաջարանի ավագանու անդամ, եւ այն ժամանակվա բյուջեի սուղ պայմաններում գրեթե ոչինչ հնարավոր չէր կատարել համայնքում: Հիմա տեղյակ չեմ համայնքի բյուջեի հնարավորություններից, բայց ինձ համար պարզ է մի բան, եթե անմիջապես աչքի զարնող խնդիրը չես լուծում, մնացածն արդեն ավելորդ է: Երեխաների՝ փոշու եւ ավազի մեջ խաղալն արդեն իսկ խնդիր է: Իհարկե, այս տարիներին որոշակի աշխատանքներ կատարվել են, բայց դրանք պետք է ավելանան: Ուրախ կլինեմ՝ Քաջարան գալով՝ տեսնել առավել կանաչապատ, բարեկարգ, մանկական խաղահրապարակներով լի, հոգեւոր-մշակութային եռուզեռով ապրող համայնք:

Համայնքի փոքրիկ հարցերը լուծելով միայն կարելի է հասնել մեծ խնդրի լուծման, ուստի ես վստահ եմ, որ Մանվել Փարամազյանը համայնքային իշխանության հնարավորությունների սահմաններում կիրականացնի բազում ծրագրեր, իսկ կոմբինատի աջակցությունը թույլ կտա ավելի լուրջ փոփոխություններ կատարել: Ծանոթ եմ նախընտրական ծրագրին եւ համոզված, որ նրա պաշտոնավարման ընթացքում կապահովվի դրա կատարումը:

Մաղթում եմ, որ Մանվել Փարամազյանն ազնվորեն ընտրվի համայնքապետ, եւ վստահ կարող եմ ասել, որ այդպես էլ կլինի: Առհասարակ մեր իրականության մեջ ընտրված լինելը կարեւոր եւ հազվադեպ երեւույթ է: Ցանկանում եմ, որ ընտրվելու դեպքում համայնքապետը լիարժեք ծառայի ժողովրդին, եւ տարիներ հետո չփոշմանենք մեր վստահության քվեն նրան տալու համար: Քաջարանը մեծ ընտանիք է՝ իր ուրույն կոլորիտով, որ արդյունավետ կառավարման կարիք ունի:

ՄԵԼԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ աշխատակից

Շատ կցանկանայի, որ առաջիկա ընտրություններում համայնքի ղեկավար ընտրվի Մանվել Փարամազյանը, ում անմիջականությունը, խիզախությունը, ժողովրդասիրությունը քաղաքապետարանի հետ առավել սերտ համագործակցության հիմքեր կստեղծեն մարդկանց համար: Քաղաքում՝ հատկապես երիտասարդների համար, բազում խնդիրներ կան, որոնց գոնե մի մասի լուծումն ակնկալում ենք ստանալ նրա ընտրվելուց հետո՝ պաշտոնավարման ողջ ժամանակահատվածում:

Բնականաբար, ինչպես մեր հանրապետության մյուս համայնքներում, այստեղ նույնպես ամենաառաջնային խնդիրն աշխատատեղերի սակավությունն է, ինչի հետեւանքով երիտասարդների մի մասը չի վերադառնում հայրենի բնօրրան: Հաջորդ խնդիրը երիտասարդների համար հոգեւոր-մշակութային կյանքի, հանգստի, ազատ ժամանցի կազմակերպման, նրանց կայացման համար ոչ լիարժեք պայմաններն են:

Ինչքան մեր համայնքը բարեկեցիկ ու գրավիչ լինի, այնքան այստեղ ապրելու եւ արարելու ցանկությունը երիտասարդներիս շրջանում մեծ կլինի: Ուստի իմ վստահության քվեն տալով Մանվել Փարամազյանին՝ համոզված եմ, որ նրա աշխատանքի պտուղները կարճ ժամանակում կքաղենք, եւ մի քանի տարի հետո մեր համայնքն ավելի բարեկարգ ու ակնահաճո տեսք կունենա:

ԱՐԹՈՒՐ ՊԱՊՅԱՆ
Ինժեներ

Դեռեւս մանկության տարիներին Մանվել Փարամազյանը շրջապատում առանձնացել է իր սրտացավությամբ, անմիջականությամբ, դիմացինին աջակցելու պատրաստակամությամբ: Առհասարակ կարեւոր է մարդու նկատմամբ հատկապես սրտացավ վերաբերմունք ունենալը, ինչը կնպաստի նաեւ հետագայում համայնքի հանդեպ նման վերաբերմունք ունենալ: Բոլորին եւ յուրաքանչյուրին աջակցելու ձգտումը կապահովի համայնքի բարեկեցությունը:

Նա մշտապես ապրել է քաղաքի հոգսերով, այս կամ այն խնդիրը լուծելու համար առաջարկել տարբեր լուծումներ: Հիշում եմ՝ դեռեւս երեխա ժամանակ նախաձեռնում էր Քաջարան գյուղի 1880-ական թվականների գերեզմանատեղիի տարածքի մաքրում, օգնում տարեցներին եւ օպերատիվ լուծում տալիս առաջացած խնդիրներին: Մանկուց առաջնորդվել է՝ կա խնդիր, ուրեմն կա նաեւ լուծում սկզբունքով: Առհասարակ մարդու տեսակը շատ կարեւոր է հարց լուծելիս, եւ, համոզված եմ, իմ թեկնածուն թե՛ համայնքային, թե՛ անձնական միջոցները կներդնի քաղաքում բարեփոխումներ իրականացնելու համար:

Ազգովի սիրում ենք անընդհատ մեղադրել իշխանություններին մեր հոգսաշատ կյանքի համար, առանց մտածելու, որ բարելավման աշխատանքները սկսվում են մեզնից. յուրաքանչյուրս մեր ուժերի ներածին չափով փորձենք նպաստել համայնքի, բնականաբար նաեւ հայոց պետականության կայացմանն ու ամրապնդմանը:

Վստահ եմ՝ Մանվել Փարամազյանի համայնքապետ ընտրվելու դեպքում Քաջարանը կդառնա ավելի բարեկարգ, կանաչապատ ու մաքուր, իսկ փոքր եւ միջին բիզնեսի զարգացման համար կստեղծվեն բարենպաստ պայմաններ: Չափազանց կարեւոր է մարդկանց ոգեւորելն ու խրախուսելը, եւ, իմ կարծիքով, յուրաքանչյուր բարեփոխում պետք է սկսել մարդուց, նրա հանդեպ ունեցած վերաբերմունքից: Կարեւորը միջոցները չեն, այլ դրանց արդյունավետ օգտագործումը, ինչի համար անհրաժեշտ է ճիշտ ուղի մատնանշել, իսկ Մանվել Փարամազյանի մեջ տեսնում եմ այդ նախաձեռնողականության ներուժը: ■

ՎԻԼՅՈՇԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Կենսաթոշակառու

ՏԻՄ համակարգն անմիջականորեն կապված է ազգաբնակչության հետ, եւ նրա կատարած ու չկատարած աշխատանքները մարդկանց տեսադաշտում են: Եվ այն, ինչ համայնքային իշխանությունները չկարողացան կատարել, ներելի է, իսկ այն, ինչ չցանկացան կատարել, աններելի է: Քաջարանում այս տարիներին, իհարկե, շատ աշխատանքներ են կատարվել, բայց դեռ բազում խնդիրներ կան, որոնց լուծմանը մարդիկ սպասում են:

Մանվել Փարամազյանի մարդկային վերաբերմունքը, հեղինակությունը զգացվել են մինչ պաշտոնավարել ցանկանալը, եւ նա մշտապես արժանացել է հանրության ուշադրությանը: Վետերաններով հավաքվելիս, սովորության համաձայն, զրուցում ենք երկրի դարդ ու ցավից, յուրովի վերլուծում տարբեր իրավիճակներ, եւ ինձ համար ուրախալի է, որ շատերն են իրենց դրական վերաբերմունքն արտահայտում Փարամազյանի հանդեպ, իսկ ապրիլյան քառօրյա պատերազմի օրերին ժողովուրդը տեսավ հայրենասեր Մանվել Փարամազյանին:

Այսօր քաղաքում արդեն իսկ իրականացվում են աշխատանքներ, որոնք, համոզված եմ, նրա ընտրվելուց հետո շարունակական կլինեն: Եկել է պահը երկրի զարգացման, համայնքի բարգավաճման նկատմամբ էլ ավելի վստահություն ձեռք բերելու, համայնքային իշխանություններին անվերապահորեն հավատալու:

Մեծահասակներիս հանդեպ որոշակի ուշադրություն ցուցաբերվում է, բայց կցանկանայինք, որ մեզ համար կատարված որեւէ աշխատանք հետագայում անհետեւողական վերաբերմունքի չարժանանա: Իսկ քաղաքի բոլոր խնդիրներն առաջնային լուծում են պահանջում՝ սկսած երիտասարդների աշխատանքի տեղավորումից մինչեւ համայնքի բարեկարգում: Ցավալի է, երբ զորացրվելուց հետո երիտասարդները չեն կարողանում աշխատանք գտնել եւ ստիպված արտագաղթում են, ինչի հետեւանքով հարյուրավոր ընտանիքներ են քայքայվում: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը միակ գործատուն է, եւ, բնական է, որ նրա՝ աշխատանքի տեղավորելու հնարավորություններն անսահմանափակ չեն: Կան հարցեր, որոնց լուծման համար բնավ մեծ միջոցներ հարկավոր չեն, բայց չեն կատարվում, իսկ մարդիկ, դա տեսնելով, կորցնում են վստահությունը համայնքային իշխանության հանդեպ: Լավագույնի ակնկալիքով իմ վստահության քվեն տալիս եմ Մանվել Փարամազյանին, եւ, համոզված եմ, շատ հարցեր նրա նախաձեռնողականության շնորհիվ լուծում կստանան: ■

Քաջարան համայնքի ղեկավարի թեկնածու Մանվել Փարամազյանի նախընտրական ծրագրի հիմնադրույթները

էջ 2

եւ արտերկրի քաղաքային համայնքների հետ՝ փորձի փոխանակման, համատեղ ծրագրերի իրականացման նպատակով
- Քաղաքապետարանի կողմից համայնքում նախատեսված եւ իրականացվող աշխատանքների մասին քաջարանցիներին պատշաճ եւ ժամանակին կծանուցվի տարբեր եղանակներով, այդ թվում՝ քաղաքապետարանի պաշտոնական կայքի միջոցով

Հոգեւոր-մշակութային կյանքի ակտիվացում

- Գրադարանի, արվեստի դպրոցի վերանորոգում եւ կահավորում, գրադարանի ֆոնդերի համալրում
- Ինտերնետ կենտրոնի գործարկում
- Փակ լողավազանի գործարկում եւ ֆուտբոլի դաշտի վերանորոգում
- Մարզական նոր սեկցիաների գործարկում, մարզասրահների կահավորում
- Մշակութային եւ մարզական միջոցառումների կազմակերպում
- Առողջ ապրելակերպի քարոզչություն եւ ֆիզիկական ակտիվության խրախուսում

Էկոլոգիական վիճակի բարելավում

- Քաղաքի փողոցների եւ պուրակների կանաչապատում
- Միջշենքային տարածքների կանաչապատում եւ բարեկարգում
- Մանկական զբոսայգու վերականգնում

31 օգոստոսի 2016թ.

> Արժանատիպ կյանք

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ»
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32:
Հեռ.՝ **(0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47**:
էլ.փոստ՝ syuniacyerkir@mail.ru
էլ.կայք՝ www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ»
բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր:
Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:
Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում:
Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Պետական աջակցություն՝ տարեկան 500000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 3 տպագրական մամուլ:
Տպաքանակը՝ 1720, գինը՝ 100 դրամ:
Ստորագրված է տպագրության 08.09.2016թ.: